ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿԱՐԻՆԵ ԽՈՋԱՅԱՆ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՁԵՎԵՐԸ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 323.28(07)
ԳՄԴ 66.3(0)3g7
Խ 755

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհուրդը:

Մասնագիտական խմբագիր՝
քաղաքական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ս. Ալեքսանյան

Գրախոսներ՝
քաղաքական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Փ. Ենգոյան
քաղաքական գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Գ. Սարգսյան

Խոջայան Կարինե Գագիկի
Խ 755 Ահաբեկչության դեմ պայքարի ժամանակակից ձևերը: Ուսումնամեթոդական ձեռնարկ/ Կ. Գ. Խոջայան: -Եր.: ԵՊՀ հրատ., 2021, 94 էջ:

«Ահաբեկչության դեմ պայքարի ժամանակակից ձևերը» ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված են դասընթացի նպատակն ու խնդիրները, ահաբեկչության դեմ պայքարի հիմնահարցերին վերաբերող մասնագիտական գրականությունը, այս ոլորտը կարգավորող միջազգային հիմնական կոնվենցիաները, արձանագրությունները, այլ կարգավորող մեխանիզմները: Աշխատության մեջ ուսումնասիրվում են ահաբեկչության տեսակները, պատմական հիմնական շրջափուլերը, ահաբեկչության առաջացմանն ու տարածմանը նպաստող առանցքային գործոնները, ահաբեկչության կանխարգելման և վերջինիս հետևանքների վերացմանն ուղղված միջազգային կառույցների կողմից ձեռնարկվող քայլերը, առանձին պետությունների կողմից իրականացվող հակաահաբեկչական պայքարը: Ուսումնամեթոդական ձեռնարկը կարող է օգտակար լինել ահաբեկչության դեմ պայքարի ուսումնասիրությունների համար ինչպես տեսական, այնպես էլ գործնական տեսանկյունից:

Ձեռնարկը նախատեսված է բուհերի ուսանողների, հետազոտողների, ահաբեկչության դեմ պայքարի հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 323.28(07)
ԳՄԴ 66.3(0)3g7

ISBN 978-5-8084-2512-5

© ԵՊՀ հրատ., 2021
© Խոջայան Կ. Գ., 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ..... 7
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ 8
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՏՎՅԱԼՆԵՐԸ 9
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԸ 10
ԹԵՄԱ ԱՌԱՋԻՆ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ,
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 12
ԹԵՄԱ ԵՐԿՐՈՐԴ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ: ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ..... 23
ԹԵՄԱ ԵՐԲՈՐԴ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ..... 29
ԹԵՄԱ ՉՈՐՐՈՐԴ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ:
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 35
ԹԵՄԱ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕՐԱԿԱՐԳՈՒՄ..... 59
ԹԵՄԱ ՎԵՑԵՐՈՐԴ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՆ
ԱՌԱՆՁԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՕՐԱԿԱՐԳԵՐՈՒՄ: ՀԱԿԱԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 74
ԹԵՄԱ ՅՈԹԵՐՈՐԴ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 85
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 92

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից միջազգային հարաբերությունների առջև ծառացած ամենաարդիական խնդիրներից է միջազգային ահաբեկչության դեմ պայքարը:

Թեև ահաբեկչությունը, որպես երևույթ, մարդկությանը հայտնի է վաղ ժամանակներից, և այդ մասին խոսում էր դեռևս Արիստոտելը, այն լայն տարածում ստացավ 1970-ական թթ., իսկ միջազգային հարաբերությունների օրակարգային խնդիր դարձավ 20-րդ դարի ավարտին և 21-րդ դարի սկզբին, ինչին նպաստեցին գլոբալիզացիայի աճող տեմպերը, տեխնոլոգիական զարգացումը, ինտերնետի հասանելիությունը՝ հնարավորություն ստեղծելով համեմատաբար քիչ ռեսուրսների գործածմամբ գրանցել «զգալի արդյունքներ»:

Հետապնդելով նախնառաջ քաղաքական նպատակներ՝ ահաբեկչությունն այսօր դարձել է տարատեսակ ազգայնական, կրոնական և այլ խմբավորումների քաղաքական պայքարի միջոցներից մեկը:

Միջազգային ահաբեկչության դեմ պայքարն այսօր գրեթե բոլոր պետությունների քաղաքական և անվտանգային օրակարգի անբաժան մասն է կազմում: Այն գտնվում է միջազգային ունիվերսալ և տարածաշրջանային կազմակերպությունների գործունեության կիզակետում: Թեև հակաահաբեկչական պայքարի շրջանակներում մշակվել է բավականին լայն իրավական գործիքակազմ, ստեղծվել են ինստիտուցիոնալ կառույցներ, միևնույն ժամանակ ահաբեկչությունը շարունակում է մնալ միջազգային անվտանգությանն ու կայունությանը սպառնացող առաջնային մարտահրավերներից մեկը:

Ժամանակակից աշխարհում ահաբեկչության դեմ պայքարն ընթանում է երեք հիմնական հարթություններում՝ ահաբեկչության կանխարգելում, ահաբեկչության՝ որպես իրողության դեմ պայքար, և ահաբեկչության տարատեսակ դրսևորումների ու հետևանքների նվազեցում կամ վերացում:

Ահաբեկչության դեմ պայքարն օրակարգային է նաև Հայաստանի Հանրապետության համար: Հայաստանը մեկ անգամ չէ, որ

առնչվել է այս երևույթին: Ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում ՀՀ-ն միացել է միջազգային կոնվենցիաներին, արձանագրություններին, մասնակցում է մասնավորապես ԱՊՀ-ի և ՀԱՊԿ-ի շրջանակներում կազմակերպվող համատեղ զորավարժություններին, համագործակցում է միջազգային գործընկեր պետությունների և կառույցների հետ: Ահաբեկչության դեմ պայքարին անդրադարձ է կատարվում ՀՀ-ի ազգային անվտանգության ռազմավարությունում: 2005թ. ՀՀ-ն ընդունել է Ահաբեկչության դեմ պայքարի մասին օրենքը, 2008թ.՝ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքը, իսկ 2012թ. ընդունվել է Հայաստանի Հանրապետության ահաբեկչության դեմ պայքարի մասին ազգային ռազմավարությունը:

Այսպիսով, թեև միջազգային հանրությունը դեռևս չի կարողանում ահաբեկչության՝ որպես սոցիալ-քաղաքական երևույթի միասնական սահմանման շուրջ գալ ընդհանուր համաձայնության, առկա բազմաթիվ քաղաքական, սոցիալական, տնտեսական, անվտանգային խնդիրների հետ միասին վերջինս այսօր համակարծիք է մի հարցում՝ ահաբեկչությունը՝ որպես սոցիալ-քաղաքական երևույթ, վերածվել է անդրազգային և միջազգային սպառնալիքի, որի դեմ արդյունավետ պայքարը հնարավոր է միայն պետությունների, միջազգային հանրության ջանքերի մեկտեղման պարագայում և միջազգային համագործակցության շրջանակներում:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

«Ահաբեկչության դեմ պայքարի ժամանակակից ձևերը» դասընթացի ծրագիրը մշակվել է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի և քաղաքական գիտության և պատմության տեսության ամբիոնի կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան: Դասընթացի նպատակն է՝

1. Դասընթացի շրջանակներում ուսանողներին ծանոթացնել ահաբեկչության՝ որպես երևույթ հասկացության հետ, ներկայացնել ահաբեկչության վերափոխման էվոլյուցիան, բացահայտել ահաբեկչության հիմնական քաղաքական, սոցիալական և տնտեսական դրդապատճառները, վերլուծել ահաբեկչության հիմնական գաղափարական ուղղությունները և վերհանել ահաբեկչության և կազմակերպված հանցագործության միջև եղած խորքային տարբերությունները:

2. Ներկայացնել ահաբեկչության դեմ պայքարի իրավական հիմքը, դիտարկել ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում ընդունված միջազգային կոնվենցիաներն ու արձանագրությունները, քննարկել դրանց կիրարկման արդյունավետությունը, համալիր վերլուծել միջազգային կառույցների կողմից իրականացվող քայլերը, ինչպես նաև միջազգային ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում համեմատել և գնահատել առանձին պետությունների փորձը:

3. Ինքնուրույն վերլուծական և հետազոտական աշխատանքների միջոցով զարգացնել ուսանողի հմտությունները ժամանակակից միջազգային հարաբերություններում՝ realpolitik-ի շրջանակներում վերհանելու, վերլուծելու և համակարգելու ահաբեկչության դեմ պայքարին առնչվող հիմնախնդիրները և գնահատել հակաահաբեկչական պայքարի հաջողված և անհաջող փորձի հիմնական պատճառները:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Ահաբեկչության դեմ պայքարի ժամանակակից ձևերը» դասընթացի շրջանակներում առաջադրվում են հետևյալ խնդիրները՝

- Համակարգային ձևով բացահայտել ահաբեկչության դեմ պայքարի ժամանակակից ձևերի հիմնական առանձնահատկությունները ինչպես առանձին երկրների օրինակով, այնպես էլ միջազգային կազմակերպությունների ձեռնարկած միջոցառումների շրջանակներում:
- Ուսումնական ձեռնարկով և դասախոսություններով համալիր ներկայացնել ժամանակակից աշխարհում ահաբեկչության դրսևորման հիմնական դրդապատճառները, գաղափարական ուղղությունները, նպատակները:
- Դիտարկել ահաբեկչության դրսևորման տեսական հիմքերը և բացահայտել դրանց դեմ պայքարի միջոցները ահաբեկչության պատմության տարբեր շրջափուլերի ընթացքում:
- Քննադատական մտածողություն ձևավորել ահաբեկչության դեմ պայքարում կիրառվող մեթոդների և ձևերի նկատմամբ:
- Գնահատել ժամանակակից աշխարհում ահաբեկչության դեմ մղվող պայքարի արդյունավետությունը:
- Դիտարկել ահաբեկչության դեմ պայքարի նշանակությունը միջազգային անվտանգության և կայունության ապահովման համատեքստում, գիտական հետաքրքրություն առաջացնել ահաբեկչության դեմ պայքարի ժամանակակից մեթոդների և միջոցների նկատմամբ:
- Համեմատական քաղաքագիտության կիրառական և մեթոդական գործիքակազմի միջոցով բացահայտել ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում այլ երկրների և միջազգային կառույցների լավագույն փորձը՝ դիտարկելով դրանց կիրառելիությունը հարավկովկասյան տարածաշրջանում հակաահաբեկչական պայքարի շրջանակներում:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Աշխատանքի տեսակը	**Ժամաքանակը**
Ընդհանուր ժամաքանակը	
Լսարանային աշխատանք	
Դասախոսություններ	30
Սեմինարներ	-
Ինքնուրույն աշխատանք (դասախոսության նյութերի, դասագրքերի, մենագրությունների, գիտական հոդվածների, իրավական փաստաթղթերի, այլ աշխատանքների ինքնուրույն ուսումնասիրում)	21
Գիտելիքի ընթացիկ վերահսկման տեսակները (ստուգողական գրավոր աշխատանքներ, միջանկյալ քննություններ)	1 ժամ 1 ուսանողի համար
Եզրափակիչ քննություն	9

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԸ

Թեմաների անվանումները	Ցերեկային ուսուցում			
	Ժամաքանակը			
	Դասախոսություն	Սեմինար պարապմունքներ	Ինքն. աշխատանք	Ժամերն ըստ թեմաների
Թեմա 1. Ահաբեկչության սահմանումը, նպատակները, գաղափարախոսական հիմնական ուղղությունները	4	-	4	
Թեմա 2. Ահաբեկչություն: Պատմական ակնարկ և հիմնական շրջափուլերը	2	-	2	
ԹԵՄԱ 3. ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ	4		2	
Թեմա 4. Ահաբեկչության դեմ պայքարի իրավական հենքը: Ահաբեկչության դեմ պայքարը Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում	6			
ԹԵՄԱ 5. ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵ-	6		4	

ՐԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ				
ԹԵՄԱ 6. ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՆ ԱՌԱՆՁԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԵՐՈՒՄ: ՀԱԿԱԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ և ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	6		6	
ԹԵՄԱ 7. ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	2		2	

ԹԵՄԱ ԱՌԱՋԻՆ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ահաբեկչությունը համընդգրկուն և համապարփակ հասկացություն է: Չնայած արդի քաղաքական գործընթացներում ահաբեկչությունը վերածվել է ամենասուր հիմնախնդիրներից մեկի, իսկ դրա դեմ պայքարը ձեռք է բերել գլոբալ բնույթ, առ այսօր ահաբեկչության՝ որպես երևույթի սահմանումը շարունակում է մնալ լայն քննարկումների առարկա:

Ահաբեկչության սահմանումները բազմաթիվ և բազմազան, որոնք տրվում են ոչ միայն քաղաքագիտական հանրույթի, այլ նաև քաղաքական գործիչների, տարատեսակ պետական կառույցների կողմից: Մասնավորապես, ԱՄՆ-ի պետքարտուղարությունն ահաբեկչությունը բնորոշում է որպես *«կանխամտածված, քաղաքական դրդապատճառներով պայմանավորված բռնության տեսակ, որն իրականացվում է ոչ զինյալ թիրախ խմբերի նկատմամբ ազգայնական կամ գաղտնի խմբավորումների կողմից՝ լսարանի վրա ազդեցություն գործելու նպատակով»*[1]: Գիտական գրականության մեջ առանձնացվում են ահաբեկչության ավելի քան 400 սահմանումներ: Օրինակ, Դեյվիդ Ռապապորտը ահաբեկչությունը սահմանում է այսպես. *«Մասնավոր կառույցների կամ անձանց և պետությունների կողմից քաղաքական նպատակներով օգտագործվող բռնություն է՝ իրեն առանձնահատուկ բնութագրիչներով»*[2]: Վերջինս նշում է, որ *«բռնության այս տեսակը չի կարգավորվում բռնության դեմ պայքա-*

---

[1] United States Code, 2006 Edition, Supplement 4, Title 22 - Foreign Relations and Intercourse, Chapter 38, Section 2656f - Annual country reports on terrorism// https://www.govinfo.gov/content/pkg/USCODE-2010-title22/pdf/USCODE-2010-title-22-chap38-sec2656f.pdf.

[2] Rapoport D., Fear and Trembling: Terrorism in Three Religious Traditions, The American Political Science Review, vol. 78, no. 3, 1984, pp. 658–677. *JSTOR*, www.jstor.org/stable/1961835. Accessed 23 Mar. 2021.

րի համար նախատեսված հանրության համար ընդունելի նորմերով, պատերազմի և պատժի կանոններով»[3]*:* Իսկ, օրինակ, Լուիս Ռիչարդսոնը իր ուսումնասիրությունների արդյունքում գալիս է այն եզրակացության, որ *«Ահաբեկչական կազմակերպությունները ձգտում են հասնել քաղաքական նպատակների բռնության կամ բռնության սպառնալիքի միջոցով, միևնույն ժամանակ բռնության այսպիսի գործածումը չի նախատեսում հաղթել թշնամուն, այլ նպատակ ունի բռնության այսպիսի ձևերով սիմվոլիկ ազդակներ ուղարկել՝ այս կամ այն հարցի վրա առավելագույն ուշադրություն գրավելու համար»*[4]:

Այս և բոլոր այլ սահմանումներում անկյունաքարային է այն գաղափարը, որ ահաբեկչությունը համարվում է *քաղաքական դրդապատճառներով պայմանավորված բռնության* տեսակ, ինչը թույլ է տալիս տարանջատել և տարբերակել ահաբեկչությունը բռնության այլ տեսակներից: Քաղաքական դրդապատճառները, որոնք ընկած են ահաբեկչական գործողությունների իրականացման հիմքում, բազմազան են: Այն կարող է լինել իշխող վարչակարգի փոփոխության պահանջը, հեղափոխությունները, վրեժխնդրությունը, ազգայնական կամ էթնոազգայնական ինքնորոշման հարցը, կրոնական բաղադրիչը և այլն:

Հաճախ ահաբեկչությունը, որպես երևույթ, տարաբնույթ մեկնաբանությունների առիթ է հանդիսանում՝ այն իրականացնող կամ աջակցող կողմի համար դիտարկվելով որպես «անկախության համար մղվող պայքարի» տեսակ:

Չնայած բազմաթիվ ձեռնարկած փորձերի՝ միջազգային հանրությունն առ այսօր չի գտել ահաբեկչության՝ որպես երևույթի մեկ ընդհանուր սահմանումը: Դրա պատճառները բազմազան են, մասնավորապես՝

- Գոյություն ունեցող միջպետական հակասությունները թույլ չեն տալիս միջազգային հանրությանը գալ ընդհանուր համա-

---

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Richardson L., What Terrorists Want, New York, Random House 2007, p. 4-6.

ձայնության: Հաճախ միջազգային գործընթացների որոշ դերակատարների համար ահաբեկչական տարատեսակ կառույցներին գաղտնի կամ բացահայտ աջակցությունը միջոց է վերջիններիս կողմից հետապնդած նպատակներին հասնելու համար:

- Բազմաթիվ պետություններ առավել դյուրազգաց են իրենց ինքնիշխանության պահպանման հարցում և գերադասում են միայն իրենց վերապահել ահաբեկչության գնահատումը սեփական երկրում:
- Մի շարք պետություններ նպատակահարմար չեն համարում նման գլոբալ երևույթի սահմանափակումը մեկ ընդհանուր սահմանման շրջանակներում, քանի որ այն կոնկրետ իրավիճակներում կարող է խոչընդոտել վերջիններիս կողմից համապատասխան գործողությունների իրականացմանը:
- Միջազգային հանրության որոշ շրջանակներում մտավախության տեղիք է տալիս ահաբեկչության դեմ պայքարը ընդդիմադիր խմբերի դեմ ուղղվելու հավանականությունը, որն էլ համապատասխան սահմանումների և օրենքների ընդունման դիմադրության պատճառ է:

Չնայած մի շարք նմանությունների՝ հատկանշական են ահաբեկչության և կազմակերպված հանցագործության միջև եղած տարբերությունները: Առաջին հերթին այն պայմանավորված է հանցագործության դրդապատճառով: Եթե ահաբեկչական խմբավորումների նպատակը քաղաքական փոփոխությունների իրականացումն է կամ քաղաքական փոփոխություններին խոչընդոտելու ցանկությունը, ապա հանցավոր խմբավորումների նպատակը եկամուտ ստանալն է կամ եկամտի առավելագույնս ավելացումն է: Որպես կանոն, ահաբեկչական գործողությունների նախապատրաստումը երկարատև գործընթաց է: Այն իրենից ենթադրում է ֆինանսական ռեսուրսների հայթայթում, մասնակիցների հավաքագրում, վերապատրաստում, հատուկ հմտությունների զարգացում և հարձակմանը նախապատրաստում, որը կարող է տևել ամիսներ և նույնիսկ տարիներ:

Հանցավոր կազմակերպությունները հիմնականում իրենց ջանքն ու եռանդն ուղղում են հակառակորդներից, կառավարությունից կամ օրինապահ մարմիններից իրենց պաշտպանությանը կամ վերջիններիցս խուսափելուն և այս ուղղությամբ առկա ռիսկերի նվազեցմանը: Այս բաղադրիչն առկա է նաև ահաբեկչական կառույցների պարագայում:

Մեկ այլ տարբերություն այս երկու խմբերի միջև պայմանավորված է վերջիններիս կողմից ֆինանսական ռեսուրսների հանդեպ ունեցած վերաբերմունքով: Ի տարբերություն ահաբեկչական կառույցների՝ հանցավոր կազմակերպությունները գործում են ավելի շատ որպես մասնավոր ընկերություններ, որոնց վերջնական նպատակը եկամուտ ստանալն է: Ահաբեկչական կազմակերպությունների համար առաջնային է հիմնականում ֆինանսական ռեսուրսների բաշխումը համապատասխան կառույցներին՝ այս կամ այն գործունեությունն իրականացնելու համար, այսինքն՝ նպատակը ոչ թե փողերի լվացումն է, այլ դրանց ճիշտ բաշխումը:

Միաժամանակ նշենք, որ վերջին տարիների ընթացքում այս երկու կառույցների միջև գործող բաժանարար գիծը գրեթե աննկատ է դարձել: Երբեմն անգամ անհնար է լինում նրանց տարանջատումը:

Ահաբեկչական կառույցների նպատակները տարբեր են և բազմաթիվ:

Հաճախ ահաբեկչական կառույցների հիմնական նպատակը իշխանության հասնելն ու իշխանական լծակների տարածումն է: Բռնությունն այս պարագայում դիտարկվում է միջոց դրան հասնելու համար: Մասնավորապես, էթնիկ անջատողական խմբավորումներից շատերը, ինչպես, օրինակ՝ Թամիլ Էլամի ազատագրական վագրերը (Շրի Լանկա), Աբու Սայաֆ խմբավորումը (Ֆիլիպպիններ) կամ ԷՏԱ-ն (Իսպանիա) ձգտում են անկախության իրենց իսկ միջազգայնորեն ճանաչված և ինքնիշխան պետություններից: Մերձավոր Արևելքում գործող հիմնականում հակաիսրայելական ուղղվածություն ունեցող կազմակերպությունները՝ Համասը, Պաղեստինի իսլամական ջիհադը կամ Պաղեստինի ազատագրման ժողովրդագրական ճակատը, ձգտում են իշխանության՝ անկախ Պաղեստին պետություն

ստեղծելու համար: Մի շարք այլ խմբավորումներ ձգտում են իշխանության՝ իսլամիստներից բաղկացած կառավարություններ ձևավորելու նպատակով, ինչպես, օրինակ՝ Անսար ալ-Իսլամը (Իրաք), Իսլամական զինյալ խումբը (Ալժիր), ալ-Գամա ալ-Իսլամիան (Եգիպտոս), Ուզբեկստանի իսլամական շարժումը և այլն: Այսօրինակ կառույցների նպատակը գործող ստատուս-քվոյի ձևափոխումն է և այնպիսի ապագային հասնելու ցանկությունն է, որը նրանք վստահ են, որ չեն կարող ունենալ իրադարձությունների բնականոն զարգացման դեպքում:

Իշխանության հասնելու մեկ այլ նպատակներից է երկրի բնական հարստության, մասնավորապես տարածքի կամ բնական պաշարների նկատմամբ վերահսկողություն սահմանելը: Այս իմաստով ահաբեկիչները դիմում եմ բռնության գործադրմանը՝ իրենց օրակարգը թելադրելու նպատակով: Նմանօրինակ բռնության ականատես եղանք Նիգերիայում՝ Նիգեր դելտային շրջանի մոտակայքում: Տարածքի համար մղվող պայքարի դասական օրինակներից է պաղեստինահիսրայելյան հակամարտությունը:

Ահաբեկչությունը շատ հաճախ որպես միջոց է հանդիսացել ընթացիկ քաղաքական գործընթացների վրա ազդեցություն գործելու համար: Վերոնշյալ Մերձավորարևելյան գործընթացի շրջանակներում 1995թ. նոյեմբերի 4-ին Իսրայելի վարչապետ Իցհակ Ռաբինի սպանությունը հրեա ուսանող, ծայրահեղ-օրթոդոքս Իգալ Ամիրի կողմից Յ. Արաֆատի հետ Օսլոյի բանակցությունների արդյունքում ձեռք բերած գաղտնի պայմանավորվածության համար, երբ կողմերը բավականին մոտ էին հարցի հանգուցալուծմանը, դասական օրինակներից մեկն է:

Այսպիսով, ահաբեկչությունը կարելի է դիտարկել որպես ռազմավարությունների և մարտավարությունների համադրություն, որը օգտագործվում է՝ հասնելու իշխանության կամ գերաշնորհի դիրքի՝ մի շարք քաղաքական, տնտեսական, սոցիալական, հանցավոր, կրոնական կամ այլ նպատակներն իրականացնելու համար, հատկապես այն պարագայում, երբ այդ խմբավորումները կամ կառույցներն ան-

զոր են իրենց կողմից հետապնդած նպատակներին այլ միջոցներով հասնելու համար:

Ահաբեկչական խմբավորումները, որպես կանոն, բնորոշվում են երեք հիմնական հատկանիշներով՝ ատրիբուտներով.

1. Նրանք ունեն **ապագայի շուրջ հստակ տեսլական**, ինչին, ըստ վերջիններիս, հնարավոր չէ հասնել առանց բռնության գործադրման:
2. Մյուս բնորոշիչ հատկությունը կամ ատրիբուտը **իշխանությունն է կամ ուժը**: Նրանք նաև ձգտում են իշխանության՝ իրենց նպատակներն իրականացնելու կամ դրանց իրականացման համար պետությունների կողմից վարվող քաղաքականության վրա ազդեցություն գործելու համար լծակներ ստանալու նպատակով:
3. Կարևոր հատկանիշ է **գաղափարական ուղղվածությունը,** որով վերջիններս առաջնորդվում են իրենց նպատակներին հասնելու և ծրագրերն իրականացնելու համար:

Խնդիրը վերջին 100 տարվա կտրվածքով դիտարկելու պարագայում կարելի է առանձնացնել չորս հիմնական գաղափարական ուղղություններ.

1) **Էթնոազգայնական** ահաբեկչական խմբավորումները, որոնք, որպես կանոն, հետապնդում են հստակ տարածքային նկրտումներ, օրինակ՝ Թամիլյան վագրերը Շրի Լանկայում, ԷՏԱ-ն Իսպանիայում, Քրդական բանվորական կուսակցությունը Թուրքիայում և այլն:
2) **Ձախակողմյան** ահաբեկչական խմբավորումներ, որոնք առաջնորդվում են լիբերալ կամ իդեալիստական քաղաքական հայացքներով: Այս ուղղվածություն ունեցող խմբավորումները, որպես կանոն, հակաավտորիտար են, հեղափոխական են: Թիրախավորում է գործող էլիտաներին՝ կառավարություններին, բիզնեսին: Օրինակ՝ Կարմիր բրիգադները Իտալիայում, Կարմիր բանակի ֆրակցիան Գերմանիայում, Սենդերո Լումինոսոն Պերուում և այլն:

3) **Աջակողմյան** հայացքներ դավանող ահաբեկչական խմբավորումները թիրախավորում են անձանց կամ անհատներին՝ վերջիններիս էթնիկ կամ ռասայական պատկանելիությունից ելնելով, օրինակ՝ հակասեմիթները: Նրանց գործունեության պատճառ կարող է դառնալ գործող իրադրության կամ ստատուս-քվոյի փոփոխությունը կամ դրանից բխող վտանգները:
4) Ամենանալայն տարածում ունեցողը **կրոնական** գաղափարական ուղղվածություն ունեցող ահաբեկչական կառույցներն են: Կրոնական գաղափարները, որպես կանոն, գործուն միջոց են ահաբեկիչների համար: Դրանք ունեն երկարաժամկետ ազդեցություն, որը թույլ է տալիս հետևորդների շրջանակներում խնդիրները դիտարկել «չարի ու բարու» պայքարի համատեքստում: Որպես առաջամարտիկներ՝ հանդես են գալիս կրոնական առաջնորդները՝ իմամները, քահանաները, ռաբիները, որոնց, որպես կանոն, հաջողվում է ահաբեկչական գործողությունների նպատակները «բացատրել» «Աստծո կամքի» իրականացմամբ: Կրոնական գաղափարներով պայմանավորված ահաբեկչական ակտերի օրինակները բազմաթիվ են:

Առանձնացվում են նաև բնապահպանական խնդիրների լուծման, կենդանիների իրավունքների պաշտպանության և այլ նպատակներ հետապնդող ահաբեկչական խմբավորումներ, ինչպես, օրինակ՝ Երկրի ազատագրման ճակատը, Կենդանիների ազատագրման ճակատը և այլն:

Վերոնշյալ ուղղվածությունները երբեմն միմյանց հետ համադրվում են: Ահաբեկչության գաղափարների հիմնական նպատակը հասարակության որոշ շերտերում ապագայի կառուցմանը միտված իրենց նպատակներն իրականացնելու համար պարտավորությունների ձևավորման տեսլականն է, որը կարող է լինել ինչպես նյութական աջակցության տրամադրման, այնպես էլ ծայրահեղ քայլերի դիմելու միջոցով: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ահաբեկչությունը, նախևառաջ, կոմունիկատիվ (հաղորդակցման) ակտ է, որի նպատա-

կը ահաբեկման կամ բռնության գործադրման միջոցով ուղերձներ հաղորդելն է:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Ուսումնասիրել գրականության մեջ առկա ահաբեկչության սահմանումները, վերհանել դրանցում առկա հիմնական տարրերը և առաջարկել սեփական սահմանումը:
2. Ուսումնասիրել ահաբեկչության միասնական սահմանման շուրջ միջազգային հանրության կողմից կատարված փորձերը և վերհանել դրա անհաջողության պատճառները:
3. Ներկայացնել ահաբեկչության և կազմակերպված հանցագործության միջև առկա տարբերություններն ու նմանությունները:
4. Առանձին օրինակներով վերլուծել էթնոազգային, ձախակողմյան և աջակողմյան ահաբեկչության առանձնահատկությունները:
5. Դիտարկել կրոնական ահաբեկչության հիմնական դրդապատճառները և դրանց իրականացման մեխանիզմները:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Ահաբեկչությունը՝ որպես 21-րդ դարի գլոբալ սպառնալիք:
2. Ահաբեկչության՝ որպես քաղաքական պայքարի միջոցի արդյունավետության վերլուծություն:
3. Ժամանակակից աշխարհում ահաբեկչության ձևերի տրանսֆորմացման և տարածման միտումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենագրություններ

1. **Авдеев Ю., Бельский В., Костин А.,** Терроризм как социально-политическое явление. Противодействие в современных условиях, М., 2015, с. 116-208.
2. **Антонович И., Особенков О., Панкова Л., Щегорцов В.**, Международный опыт профилактики терроризма, М., 2010, с 6-27.

3. **Антонян Ю.,** Терроризм. Криминологическое и угловно-правовое исследование, М., 1998, с. 8-72, 231-275.
4. **Антонян Ю.,** Этнорелигиозный терроризм, М., 2006, с. 9-73.
5. **Вишняков Я., Бондаренко Г., Васин С., Грацианский Е.,** Основы противодействия терроризму, М., 2006, с. 20-37.
6. **Витюк В., Паин Э.,** Терроризм в современном мире: истоки, сущность, направления и угрозы, М., 2003, с. 41-73.
7. **Гаврилин Ю., Смирнов Л.,** Современный терроризм: сущность, типология, проблемы противодействия, учебное пособие, М., 2003, с. 5-28.
8. **Грачев С.,**Терроризм и контртеррористическая деятельность: вопросы теории, Нижний Новгород, 2010, с. 8-131.
9. **Метелев С.,** Современный терроризм и методы антитеррористической деятельности: Монография, Омск, 2008, с. 7-47.
10. **Пащенко Л**., Современный терроризм: истоки и последствия, М., 2013, 150 с.
11. **Хлобустов О.,** Современный терроризм: состояние и перспективы, М., 2000, 240 с.
12. **Dershowitz A.,** Why terrorism works: understanding the threat, responding to the challenge, Yale University Press, 2003, 288 p.
13. **Forest J.,** The Terrorism Lectures. A comprehensive collection for the student of terrorism, counterterrorism and the national security, Nortia press, 2019, p. 3-65, 141-269.
14. **Hoffman B.,** Inside terrorism, New York, Columbia University Press, 2017, p. 1-173.
15. **Netanyahu B.,** Fighting Terrorism: How Democracies Can Defeat Domestic and International Terrorists, New York, 2001, 180 p.
16. **Richardson L.,** What Terrorists Want, New York, Random House 2007, p. 4-6.
17. **United Nation's Office on Drugs and Crime**, University Module Series, Module 16, Linkages between Organized Crime and Terrorism, https://www.unodc.org/e4j/en/organized-crime/module-16/index.html, հասանելի է՝ 31.03.2021թ.:

Գիտական հոդվածներ

1. **Զաքարյան Ա.,** Ահաբեկչության գիտական դասակարգման շուրջ, 21-րդ դար տեղեկատվական-վերլուծական հանդես, Երևան, 2005, թիվ 2(8), էջ 102-122:
2. **Агапов П.,** Терроризм: опыт осмысления научных подходов к изучению проблемы, Политика и право, 2020, № 2 (12), с. 29-31.
3. **Волеводз А.,** Международно-правовая криминализация международного терроризма, Вестник МГИМО, 2014, № 2(35), с. 150-160.
4. **Грачев С., Мольков С.,** Современный международный терроризм: реальностьи проблемы противодействия, 2016, Вестник Казанского юридического института МВД России, № 2(24), с. 32-35.
5. **Егоров К.,** Международный терроризм как глобальная угроза, Власть, 2008, № 6, с. 73-76.
6. **Егоров К.,** Особенности современного международного терроризма, Власть, 2008, № 8, с. 93-96.
7. **Кузнецов А., Маршакова Н.,** Международный терроризм в условиях глобализации, Юридический мир, 2010, № 9, с. 8-13.
8. **Метелев С.,** Международный терроризм: современные тенденции формирования, Законность, 2009, № 2 (892), с. 41-45.
9. **Морозов В.,** Экологический терроризм: понятие, сущность, квалификация, Уголовное право, 2007, № 2, с. 122-124.
15. **Урусова Л.,** Терроризм: трудности дефиниций, Пробелы в российском законодательстве, 2020, № 13 (4), с. 87-90.
16. **Федорченко А., Крылов А.,** Феномен “Исламского государства”, Вестник МГИМО-Университета, 2015, № 2 (41), с. 174-183.
17. **Яшлавский А.,** Ультраправый терроризм на западе в XXI в.: тенденции и особенности, Мировая экономика и международные отношения, 2020, № 64 (12), с. 5-14.

18. **Abrahms M.,** What Terrorists Really Want: Terrorist Motives and Counterterrorism Strategy, International Security, 2008, vol. 32, № 4, p. 78–105.
19. **Attar O.,** Les modalités actuelles de la lutte contre le terrorisme dans les États européens, Civitas Europa, 2015, № 1 (34), p. 169-190.
20. **Jancíková E., Veselovská S.,** The new technologies and the fight against money laundering and the terrorism financing, paper presented in 2nd International Scientific Conference on Economics and Management, 2018, p. 334-341.
21. **Onapajo H., Ozden K**., Non-military approach against terrorism in Nigeria: deradicalization strategies and challenges in countering Boko Haram, Security Journal, 2020, № 33, p. 476–492, https://doi.org/10.1057/s41284-020-00238-2, հասանելի է՝ 11.02.2021թ:
22. **Rapoport D.,** Before the Bombs There Were the Mobs: American Experiences with Terror, Terrorism and Political Violence, 2008, № 20(2), p. 167-194.
23. **Rapoport D.,** Fear and Trembling: Terrorism in Three Religious Traditions, The American Political Science Review, vol. 78, no. 3, 1984, p. 658–677. *JSTOR*, www.jstor.org/stable/1961835, հասանելի է՝ 23.03.2021թ.:
24. **Rapoport D.,** The Four Waves of Modern Terrorism, In Attacking Terrorism: Elements of a Grand Strategy, Washington DC, Georgetown University Press, 2004, p. 46-73.

Իրավական փաստաթղթեր

1. **United States Code**, 2006 Edition, Supplement 4, Title 22 - Foreign Relations and Intercourse, Chapter 38, Section 2656f - Annual country reports on terrorism// https://www.govinfo.gov/content/pkg/-USCODE-2010-title22/pdf/USCODE-2010-title22-chap38-sec2656f.pdf, հասանելի է՝ 23.03.2021թ.:

ԹԵՄԱ ԵՐԿՐՈՐԴ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ: ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ

Ահաբեկչության մասին առաջին հիշատակումները վերագրվում են Արիստոտելին, ով դեռևս Հին Հունաստանում «ահաբեկչություն» տերմինն էր օգտագործում՝ նշելով այն սարսափը, որ զգում էին հանդիսականները հունական թատրոնում ողբերգություն դիտելիս: Ահաբեկչություն տերմինը ծագել է լատիներեն *Tersere* բառից, որն այնուհետև դարձել է *Terrere*, ինչը թարգմանաբար նշանակում է վախ, սարսափ:

Առաջին ահաբեկչական գործողությունները վերագրվում են առաջին դարին, երբ առաջին հրեա-հռոմեական պատերազմի ժամանակ հրեա նախանձախնդիրները (զելոցացիներ) Երուսաղեմում սպանում էին հռոմեացիներին:

11-րդ և 12-րդ դարերում Պարսկաստանում ի հայտ եկան շիա մահմեդական խմբավորումներ, ավելի հայտնի որպես ասասիններ, ովքեր, որպես կանոն, խուսափում էին բաց մարտերից և դաշյունով կամ նման այլ զենքերով գաղտագողի հարձակումներ էին գործում թշնամիների վրա:

Այնուհետև 13-րդ դարի սկզբին այժմյան Հինդուստանի տարածքում սկսեցին գործել տհագիները կամ տուգիները՝ ավազակային խմբեր, որոնք, համաձայն հինդու մահվան աստվածուհի Կալիի պատվին տրվող ծիսական զոհաբերության, թալանում և սպանում էին ճանապարհորդներին:

Ահաբեկչությունն ավելի լայն տարածում ստացավ Ֆրանսիական հեղափոխության ժամանակ և սկսեց հաճախ ասոցացվել Մ. Ռոբեսպիերի անվան հետ, ով կազմել էր պետության դավաճանների և հեղափոխության թշամիների իր ցանկը, որոնց գիլյոտինով մահապատժի էին ենթարկում: Բազմաթիվ հեղինակներ ժամանակակից ահաբեկչության սկիզբ համարում են հենց ֆրանսիական հեղափոխությունը: Ահաբեկչություն տերմինը սկիզբ է առել հենց այս ժամանակաշրջանում:

Ահաբեկչության երևույթի գիտական ուսումնասիրություններով զբաղվող գիտնականներից Դ. Ռապապորտը առանձնացնում է ահաբեկչության պատմության չորս հիմնական ալիք՝

1. Անարխիստների շրջան՝ 1880-ական թթ. – 1920-ական թթ.
2. Ապագաղութացման շրջան՝ 1920-ական թթ. – 1960-ական թթ.
3. Նոր ձախակողմյան ալիքը (երբ տարածում ստացան ձախաթևյան հեղափոխական խմբերը)՝ 1960-ական թթ. – 2000 թթ. սկիզբ
4. Կրոնական ալիքը, որը սկսվեց 1979 թ. և շարունակվում է առ այսօր:

Անարխիստների գործողությունները, որպես կանոն, ուղղված էին գործող կառավարությունների դեմ: Նրանց նպատակը ժողովրդական ապստամբության հրահրումն էր: Օրինակները բազմաթիվ են՝ ազատություն ստացած ճորտերի ապստամբությունը Ալեքսանդր II ցարի դեմ, Իսպանիայի վարչապետ Անտոնիո Կանովաս դել Կաստիլիոյի սպանությունը 1897թ., ԱՄՆ 25-րդ նախագահ Ուիլյամ Մաք-Քինլիի սպանությունը 1901թ. և այլն: Անարխիստների համար ֆինանսավորման աղբյուր էր հանցավոր գործունեությունը՝ բանկերի թալան, շորթում և այլն:

Ապագաղութացման ալիքն ընդգրկում է Առաջին աշխարհամարտի ավարտից մինչև Երկրորդ աշխարհամարտի ավարտն ընկած ժամանակահատվածը: Այն լայն տարածում գտավ Ասիայի և Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում: Գաղութատիրական կարգերի դեմ պայքարողները թիրախավորում էին ոստիկանությանը, զինվորականությանը և մետրոպոլիայի իշխանություններին: Ֆինանսական միջոցները հիմնականում ստանում էին արևմտյան երկրներից՝ սփյուռքում բնակվող իրենց համախոհներից: Այս ալիքը ծնունդ տվեց մի քանի էթնոազգայնական խմբավորումների առաջացմանը, օրինակ՝ Իռլանդական հեղափոխական բանակը:

Նոր ձախակողմյան ալիքը երևան եկավ 1960-ականների սկզբին և գործեց գրեթե կես դար: Այն լայն տարածում ստացավ հատկապես Չինաստանում և լատինաամերիկյան մի շարք երկրներում կոմունիս-

տական գաղափարախոսության սփռման ֆոնին: Այս ժամանակահատվածում ավելի քան 10.000 ահաբեկչական ակտեր են գրանցվել աշխարհի տարբեր անկյուններում:

Կրոնական ալիքը կրոնական ուղղվածություն ունեցող ահաբեկչական խմբավորումների կողմից իրականացվող բռնությունների ալիքն է: Անգլոսաքսոնյան գրականությունն այս ալիքի սկիզբ է համարում 1979թ.՝ պայմանավորված խորհրդային զորքերի Աֆղանստան մուտք գործելու և Իրանում Իսլամական հեղափոխության հանգամանքով: Կրոնական ահաբեկչական խմբավորումները էականորեն տարբերվում են աշխարհիկ խմբավորումներից: Կրոնական ահաբեկիչները, որպես կանոն, հանդես են գալիս Աստծո կամ Ալլահի անունից և իրենց գործողությունները դիտարկում են ծայրահեղ, բայց այնուամենայնիվ արդյունավետ միջոց՝ այլոց փրկության համար: Կրոնական գաղափարախոսությունները հիմնականում ուղղված են իրերի և իրողությունների բևեռացմանը՝ չարի ու բարու, լույսի և խավարի, ճշտի և սխալի միջև: Այսօրինակ ահաբեկչական հարձակումների մերօրյա գաղափարախոսություններից մեկն է Սալաֆի-ջիհադիզմը, որի արմատները գնում են դարերի խորքը, սակայն ժամանակակից աշխարհում այն ասոցացվում է եգիպտացի ուսուցիչ, 1928թ. Մուսուլման եղբայրներ կազմակերպությունը հիմնած Հասսան ալ-Բաննայի անվան հետ: Այսօր Մուսուլման եղբայրները, Համասը, Պաղեստինյան իսլամական ջիհադը և այլ նմանատիպ կառույցներ առաջ են բերում նորանոր գաղափարներ, որոնք իրենց հերթին սնում են ժամանակակից իսլամական ծայրահեղականությունը, ինչը հանգեցրեց Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդել Նասսերի դեմ իրականացված մահապատժի փորձին, իսկ 1981թ. սպանվեց Անվար Սադաթը: Այս գաղափարներով ոգեշնչված 1979թ. ծայրահեղականները գրոհեցին Մեքքայի Մեծ մզկիթ՝ պահանջելով ողջ սաուդական ընտանիքի հեռացումը: Նման օրինակները բազմաթիվ են:

Իսլամական ծայրահեղությունից բացի գոյություն ունեն կրոնական ահաբեկչության այլ տեսակներ, ինչպես, օրինակ՝ Առում Սինրիկյոն Ճապոնիայում, հրեա ծայրահեղականները (Kahane Chai խմբավորումը) և այլն:

Ամփոփելով նշենք, որ պատմության ողջ ընթացքում նորարարությունների և նորագույն տեխնոլոգիաների ի հայտ գալուն զուգահեռ ահաբեկչությունը և դրա իրականացման մեթոդները անընդմեջ ձևափոխվել են՝ դառնալով առավել դաժան և լայնամասշտաբ: Ժամանակակից ահաբեկչությունը և դրա դեմ մղվող պայքարը միավորել է պետություններին և միջազգային հանրությանը: Այն դարձել է միջազգային օրակարգի արդի հիմնահարցերից մեկը, և ձևավորվել է այն մոտեցումը, որ միայն միասնական և համակարգված պայքարի արդյունքում է հնարավոր ահաբեկչության դեմ մղվող պայքարում գրանցել առաջընթաց:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Ուսումնասիրել քաղաքական և կրոնական դրդապատճառներով պայմանավորված ահաբեկչության դրսևորումները:
2. Համեմատական վերլուծությամբ ներկայացնել պատմական տարբեր շրջափուլերի ընթացքում ահաբեկչության դրսևորման ձևերն ու դրանց առանձնահատկությունները:
3. Վերլուծել ահաբեկչության նախորդ և ժամանակակից փուլերի տարբերություններն ու նմանությունները:
4. Ահաբեկչության պատմության ուսումնասիրության հիման վրա գնահատել ահաբեկչության հետագա զարգացման հեռանկարները, վերհանել դրանց դեմ պայքարի արդյունավետ միջոցները:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Ահաբեկչության զարգացման էվոլյուցիան և ահաբեկչության աճի միտումը ժամանակակից աշխարհում:
2. XX և XXI դարերում ահաբեկչության դրսևորման համեմատական վերլուծությունը:
3. Ժամանակակից ահաբեկչության դրսևորման հիմնական ուղղությունները:
4. Ահաբեկչական կազմակերպությունների գործունեությունը Մերձավոր Արևելքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենագրություններ

1. **Вишняков Я., Бондаренко Г., Васин С., Грацианский Е.,** Основы противодействия терроризму, М., 2006, с. 9-32.
2. **Загладин Н.,** Международный терроризм: истоки, проблемы, противодействия, М., 2006, 152 с.
3. **Кошкин А. (ред.),** Терроризм в современном мире. Информационно-аналитический вестник, выпуск 5, М., 2016, с. 8-40.
4. **Метелев С.,** Современный терроризм и методы антитеррористической деятельности: Монография, Омск, 2008, с. 56-77.
5. **Пащенко Л**., Современный терроризм: истоки и последствия, М., 2013, 150 с.
6. **Ahmad E.,** Terrorism: Theirs and Ours, New York, McGraw-Hill, 2011, 80 p.
7. **Forest J.,** The Terrorism Lectures. A comprehensive collection for the student of terrorism, counterterrorism and the national security, Nortia press, 2019, p. 27-45.
8. **Hoffman B.,** Inside terrorism, New York, Columbia University Press, 2017, p. 63-79.
9. **Laqueur W.,** A history of terrorism, Routledge, New Jersey, 2016, 322 p.
10. **Rubin B., Rubin J.,** Chronologies of modern terrorism, New York, M.E.Sharpe, 2008, 405 p.
11. **United Nation's Office on Drugs and Crime**, University Module Series, Module 1, Introduction to International Terrorism, 32 p.

Գիտական հոդվածներ

1. **Հովհաննիսյան Դ.,** Սուննիական ծայրահեղականության դրսևորումները. «Ներկան» և «ապագան», ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Վերլուծական տեղեկագիր, Երևան, 2015, թիվ 7, էջ 8-29:

2. **Беговатов А**., Международный терроризм в прошлом и настоящем, Актуальные проблемы современной политической науки. СПб., 2002, № 2, с. 62-68.
3. **Rapoport D.,** Before the Bombs There Were the Mobs: American Experiences with Terror, Terrorism and Political Violence, 2008, № 20(2), p. 167-194.
4. **Rapoport D.,** The Four Waves of Modern Terrorism, In Attacking Terrorism: Elements of a Grand Strategy, Washington DC, Georgetown University Press, 2004, p. 46-73.

ԹԵՄԱ ԵՐԲՈՐԴ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ահաբեկչության դեմ արդյունավետ պայքարը ենթադրում է վերջինիս առաջացմանն ու տարածմանը նպաստող խորքային պատճառների վերհանում, որն անհրաժեշտ է դիտարկել երկու հարթություններում՝ քաղաքական և տնտեսական:

Քաղաքական հարթությունում ահաբեկչության առաջացումն ու տարածումը պայմանավորող հանգամանքների շարքին է դասվում իշխանության լեգիմիտությունը: Ցածր լեգիտիմությունը դժգոհության լայն ալիք է ստեղծում՝ առաջացնելով հասարակության որոշ շերտերի ապստամբությունը:

Ահաբեկչության տարածման պատճառ կարող է հանդիսանալ նաև կոռուպցիայի բարձր ցուցանիշը, հատկապես ավտորիտար համակարգի պայմաններում: Ակնհայտ է, որ այն երկրներում, որտեղ առկա է ռեսուրսների անհավասարաչափ բաշխում, և իշխող էլիտան օժտված է լայն արտոնություններով, զանգվածային դժգոհության և անհնազանդության ֆոնին ահաբեկչական խմբավորումների հայտնվելու հավանականությունն ավելի մեծ է:

Մեկ այլ խնդիր է ահաբեկչության պետական հովանավորումը, որը կարող է դրսևորվել ֆինանսական միջոցների, զենքի ազատ տեղաշարժի, փաստաթղթերի տրամադրման, հանդուրժող վերաբերմունքի դրսևորման, պաշտպանության և ենթակառուցվածքների տրամադրման կամ տարատեսակ վերապատրաստումների տեսքով: Օրինակները բազմաթիվ են՝ Թալիբանի կողմից ապաստանի տրամադրումը Ալ-Քաիդային, Իրանի աջակցությունը արևմտյան մի շարք երկրներում ահաբեկչական համարվող Հեզբոլլահին և այլն:

Ահաբեկչության տարածմանը նպաստում են նաև ձախողված պետությունները, քանի որ վերջիններս չունեն բավականաչափ կամք և կարողություն՝ որպես պետություն արդյունավետ իրականացնելու իրենց վերապահված գործառույթները: Ձախողված պետությունները, որպես կանոն, չեն ունենում արդյունավետ գործող իրավական հա-

մակարգ, առկա է աղքատության և կոռուպցիայի բարձր ցուցանիշ, ինչը պարարտ հող է ստեղծում ահաբեկիչների և այլ հանցավոր խմբերի ազատ գործելու համար: Ձախողված պետություններում հաճախ կենտրոնական իշխանությունների լիազորություններն ուղղակիորեն բացակայում են երկրի որոշ շրջաններում, ինչը նշանակում է, որ վերջիններս ի վիճակի չեն պաշտպանել երկրի տարածքային ամբողջականությունը, բնակչության անվտանգությունը, սահմանների անքակտելիությունը, ինչը նպաստում է ահաբեկիչների ներթափանցմանը երկրի տարածք: Ահաբեկչության առաջացման և տարածման մեկ այլ գործոն է քաղաքական կայունության բացակայությունը, ինչը նույնպես նպաստավոր պայմաններ է ստեղծում ահաբեկիչների գործունեության համար, քանի որ, ըստ էության, խոչընդոտվում է ներքին ինստիտուցիոնալ մեխանիզմների միջոցով ահաբեկչական կառույցների և խմբավորումների գործունեության կանխումը:

Տնտեսական հարթությունում ահաբեկչության առաջացումն ու տարածումը մեծապես պայմանավորված է տնտեսական իրավիճակի հետևանքով առաջացող դժգոհություններին, որոնք կարող են նպաստել ահաբեկչությանը:

Տնտեսական պայմանների և բռնության պատճառահետևանքային կապի մասին խոսում էին դեռևս Պլատոնն ու Արիստոտելը, ովքեր կարծում էին, որ տնտեսական գործոնները էական դեր են խաղում բռնության կիրառման գործում: Ավելի ուշ մարքսիստները պատերազմը դիտարկում էին որպես հումքի և շուկաների վերահսկման պայքարում անհավասարությունները պահպանելու մեխանիզմ՝ կարծելով, որ բռնությունը կապիտալիզմի անխուսափելի հետևանքն է:

Գործազրկությունը, աղքատության, կոռուպցիայի բարձր ցուցանիշը, երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը, մենաշնորհների առկայությունը, պետության կողմից տրամադրվող առաջնային ծառայությունների մատուցման որակը, ավտորիտար և տոտալիտար վարչակարգերում պետության կողմից իրականացվող բռնաճնշումները մեծապես նպաստում են հակադարձ բռնության առաջացմանը:

Ահաբեկչությանը նպաստող գործոններից է ստվերային տնտեսության աճը, մասնավորապես տնտեսական գործունեության այն տեսակի առկայությունը, որը չի կարգավորվում և չի հարկվում կառավարության կողմից: Ավելին, ստվերային տնտեսությունը ոչ միայն նպաստավոր պայմաններ է ստեղծում ահաբեկչական կառույցների գործունեության համար, այլև ապահովում է դրանց ֆինանսավորումը:

Ահաբեկչական գործողություններն իրենց ուղղակի ազդեցությունն են թողնում առևտրի, փոխադրումների, զբոսաշրջության, ֆինանսական շուկաների վրա: Ահաբեկչության տնտեսական հետևանքներից է սահմանների պաշտպանության լրացուցիչ խստացումը, ինչը կարող է խոչընդոտներ առաջացնել առևտրաշրջանառության համար և հավելյալ ծախսերի պատճառ դառնալ՝ միաժամանակ ավելացնելով անվտանգության և ռազմական գործողությունների համար նախատեսված ծախսերի ծավալը: Տնտեսության վրա ահաբեկչության ազդեցության օրինակ է 2001թ. սեպտեմբերի 11-ի՝ ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչական ակտը, որի հետևանքով օրեր շարունակ փակվեց Նյու Յորքի բորսան, 20% նվազեց դեպի ԱՄՆ ուղևորահոսքը, 100.000-ից ավել մարդ կորցրեց աշխատանքը, մի շարք ավիաընկերություններ սնանկացան, տուժեցին մի շարք այլ ոլորտներ՝ հյուրանոցային բիզնեսը, տուրիզմը, մեքենաների վարձակալությունը, քաղաքացիական նշանակության ինքնաթիռների արտադրությունը և այլն: Սեպտեմբերի 11-ի դեպքերին հաջորդած գործողությունների արդյունքում ավելացան նաև ԱՄՆ ռազմական ծախսերը, ինչը նույնպես ուղղակի ազդեցություն թողեց պետության ֆինանսատնտեսական ողջ համակարգի վրա:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Ուսումնասիրել և վերհանել ահաբեկչության առաջացմանն ու տարածմանը նպաստող խորքային պատճառները:

2. Դասակարգել և վերլուծել քաղաքական հարթությունում ահաբեկչության առաջացումն ու տարածումը պայմանավորող հանգամանքները:
3. Վերհանել և համալիր ուսումնասիրության ենթարկել ահաբեկչության առաջացմանը նպաստող հիմնական տնտեսական գործոնները:
4. Մատնանշել և վերլուծել ժամանակակից ահաբեկչության դեմ պայքարի քաղաքական և տնտեսական հիմքերը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորման ազդեցության գնահատումը միջազգային անվտանգության ապահովման համատեքստում:
2. Ահաբեկչության վտանգի առաջացումը զինված հակամարտությունների ժամանակ:
3. Ահաբեկչական խմբավորումների և կառույցների մասնակցությունը Արցախյան երրորդ պատերազմին:
4. Ահաբեկչական խմբավորումների ներկայության հետագա դրսևորումների վերլուծությունը տարածաշրջանային անվտանգության պահպանման համատեքստում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենագրություններ

1. **Авдеев Ю., Бельский В., Костин А.,** Терроризм как социально-политическое явление. Противодействие в современных условиях, М., 2015, 388 с.
2. **Антонович И., Особенков О., Панкова Л., Щегорцов В.**, Международный опыт профилактики терроризма, М., 2010, с. 47-126.
3. **Вишняков Я., Бондаренко Г., Васин С., Грацианский Е.,** Основы противодействия терроризму, М., 2006, с. 20-29, 72-89.

4. **Гаврилин Ю., Смирнов Л.,** Современный терроризм: сущность, типология, проблемы противодействия, учебное пособие, М., 2003, с. 29-59.
5. **Грачев С.,** Терроризм и контртеррористическая деятельность: вопросы теории, Нижний Новгород, 2010, с. 27-37.
6. **Метелев С.,** Современный терроризм и методы антитеррористической деятельности: Монография, Омск, 2008, с. 47-56.
7. **Пащенко Л**., Современный терроризм: истоки и последствия, М., 2013, 150 с.
8. **Forest J.,** The Terrorism Lectures. A comprehensive collection for the student of terrorism, counterterrorism and the national security, Nortia press, 2019, p. 65-99.
9. **Russell H., Hoffman B.,** Terrorism and Counterterrorism, Understanding the New Security Environment, McGraw-Hill Education, 2011, 816 p.

Գիտական հոդվածներ

1. **Волеводз А.,** Международно-правовая криминализация международного терроризма, Вестник МГИМО, 2014, № 2(35), с. 150-160.
2. **Грачев С., Мольков С.,** Современный международный терроризм: реальностьи проблемы противодействия, 2016, Вестник Казанского юридического института МВД России, № 2(24), с. 32-35.
3. **Егоров К.,** Международный терроризм как глобальная угроза, Власть, 2008, № 6, с. 73-76.
4. **Егоров К.,** Особенности современного международного терроризма, Власть, 2008, № 8, с. 93-96.
5. **Зонов Ф.,** Международный терроризм и мировой опыт борьбы с ним, Власть, 2011, № 12, с. 103-106.
6. **Кузнецов А., Маршакова Н.,** Международный терроризм в условиях глобализации, Юридический мир, 2010, № 9, с. 8-13.

7. **Ледях И.,** Борьба с международным терроризмом и защита прав человека, Труды Института государства и права Российской академии наук, 2013, № 1, с. 137-163.
8. **Метелев С.,** Международный терроризм: современные тенденции формирования, Законность, 2009, № 2 (892), с. 41-45.
9. **Морозов В.,** Экологический терроризм: понятие, сущность, квалификация, Уголовное право, 2007, № 2, с. 122-124.
10. **Селезнева И.,** Основные тенденции развития современного терроризма и пути его преодоления, Вестник Московского университета, Серия 18, Социология и политология, 2011, № 1, с. 178-184.
11. **Яшлавский А.,** Ультраправый терроризм на западе в XXI в.: тенденции и особенности, Мировая экономика и международные отношения, 2020, № 64 (12), с. 5-14.
12. **Andréani G.,** La guerre contre le terrorisme: un succès incertain et coûteux**,** Politique étrangère, 2011, № 2, p. 253-266.
13. **Jančíková E., Veselovská S.,** The new technologies and the fight against money laundering and the terrorism financing, paper presented in 2nd International Scientific Conference on Economics and Management, 2018, p. 334-341.
14. **Onapajo H., Ozden K**., Non-military approach against terrorism in Nigeria: deradicalization strategies and challenges in countering Boko Haram, Security Journal, 2020, № 33, p. 476–492, https://doi.org/10.1057/s41284-020-00238-2, հասանելի է՝ 11.02.2021թ.:

ԹԵՄԱ ՉՈՐՐՈՐԴ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ: ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

XX դարի երկրորդ կեսից և հատկապես XXI դարում միջազգային ահաբեկչությունը դարձավ միջազգային անվտանգության հիմնական սպառնալիքներից մեկը: Սրանով է պայմանավորված ահաբեկչության դեմ պայքարի հետագա ինստիտուցիոնալիզացումը: Մշակվեցին մի քանի տասնյակից ավել միջազգային փաստաթղթեր՝ կոնվենցիաներ, արձանագրություններ, բանաձևեր: Միջազգային ահաբեկչության դեմ պայքարն առավել արդիական դարձավ 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական ակտից հետո: Սակայն միջազգային ասպարեզում ահաբեկչության դեմ պայքարի առաջին փորձը եղավ 1934թ., երբ Ազգերի լիգան հայտատարեց, որ ահաբեկչությունը նախևառաջ պետք է դիտարկել իրավական շրջանակներում, և մշակեց Ահաբեկչության կանխարգելման և դատապարտման մասին կոնվենցիա: Կոնվենցիայի մշակման առիթ հանդիսացավ 1934թ. հոկտեմբերի 9-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում բուլղարացի ազգայնական Վլադո Չերնոզեմսկիի (Վելիչկո Կերին) կողմից Հարավսլավիայի թագավոր Ալեքսանդրի և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Լուի Բարտուի սպանությունը: Սպանության հանգամանքները պարզելու համար համապատասխան դիմում ուղարկվեց Ազգերի լիգայի խորհուրդ: Խորհորդը եկավ այն եզրակացության, որ «գործող միջազգային իրավունքի գործիքակազմը ահաբեկչության և ռեպրեսիվ գործողությունների ոլորտում հստակ չէ և թույլ չի տալիս ապահովել արդյունավետ միջազգային համագործակցություն այս ոլորտում»[5]: Որոշում ընդունվեց ստեղծել փորձագետների խումբ, որը կիրականացնի համապատասխան ուսումնասիրություններ, ինչի հիման վրա էլ կարելի կլինի մշակել միջազգային կոնվենցիա: Ըստ էու-

[5] Saul B., The Legal Response of the League of Nations to Terrorism, Journal of International Criminal Justice, 2006, vol. 4, № 1, p. 80, https://doi.org/10.1093/-jicj/mqi096, հասանելի է՝ 12.02.2021թ.:

թյան՝ սա առաջին միջազգային փորձն էր, երբ ահաբեկչությունն իրավական դաշտում որակավորվեց որպես հանցագործություն, իսկ ահաբեկչական խմբավորումներն ու բանդաները որակավորվեցին որպես հանցագործներ: Կոնվենցիան ընդունվեց երեք տարի անց՝ 1937թ., սակայն այն չվավերացվեց: Կոնվենցիան վավերացրած միակ պետությունը Հնդկաստանն էր: Կոնվենցիայի չվավերացման պատճառները հիմնականում պայմանավորված էր նախապատերազմյան ժամանակաշրջանով: Պետություններից շատերի համար հստակ չէր կոնվենցիայում առաջարկվող ահաբեկչության սահմանումը՝ այն շատ լայն էր և ահաբեկչությունը ձևակերպում էր որպես «*պետության դեմ ուղղված բոլոր հանցավոր գործողությունները, որոնք միտված են որոշ անձանց կամ խմբերի, ինչպես նաև հասարակության լայն շերտերի շրջանակում սարսափելու ահաբեկչության մթնոլորտ*»:

Կոնվենցիան չգրանցվեց անգամ Ազգերի լիգայի դեպոզիտորիայում: Այն չի փոխանցվել ՄԱԿ-ին՝ որպես իրավահաջորդ կազմակերպության, հետևաբար Միավորված ազգերի կազմակերպությունը պարտավորություններ չի կրում վերջինիս համար:

1963թ.-ից ի վեր ՄԱԿ-ի և նրա մասնագիտացված կառույցների կողմից ավելի քան 16 միջազգային համաձայնագրեր են մշակվել (13 հակաահաբեկչական կոնվենցիաներ և 3 արձանագրություններ), որոնց յուրաքանչյուր անդամ-պետություն ազատ է միանալ: Այս կոնվենցիաներն են՝

1. **«Օդանավերի մեջ կատարվող հանցագործությունների և որոշակի այլ գործողությունների մասին»** կամ 1963թ. սեպտեմբերի 14-ի Տոկիոյի կոնվենցիա: Այս կոնվենցիան թռիչքային անվտանգության մասին է և իրավասությունների լայն շրջանակ է տրամադրում օդանավի հրամանատարին՝ ձեռնարկելու իրավաչափ միջոցներ այն անձանց նկատմամբ, ովքեր հրամանատարի կարծիքով պատրաստվում են ահաբեկչական գործողություն իրականացնել: Ավելին, օդանավի գրանցման պետությունը իրավասու է իր իրավազորությունն իրականացնել այդ օդանավի մեջ կատարված

հանցագործությունների և գործողությունների նկատմամբ: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2003թ. ապրիլի 23-ից:

2. «**Օդանավերի անօրինական զավթումների դեմ պայքարի մասին**» կոնվենցիա՝ ստորագրված Հաագայում 1970թ. դեկտեմբերի 16-ին: Կոնվենցիան օդանավում գտնվող ցանկացած անձի գործողությունները համարում է անօրինական, եթե վերջինս թռիչքի ընթացքում անօրինական, սպառնալիքի, բռնության միջոցով կամ ահաբեկման ցանկացած այլ ձևով ցանկանում է առևանգել օդանավը: Կոնվենցիան հորդորում է բոլոր կողմերին խիստ միջոցներ ձեռնարկել նման հանցագործությունների դեպքում, արտահանձնել հանցագործներին կամ քրեորեն պատժել: Հայաստանի Հանրապետությունը միացել է Կոնվենցիային 1994թ. մարտի 29-ից:
3. «**Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին**» կոնվենցիա կամ 1971թ. Մոնրեալի կոնվենցիա: Այն նույնպես վերաբերում է օդանավերի անվտանգությանը, շահագործման մեջ գտնվող օդանավին պատճառած այնպիսի վնասին, որի հետևանքով օդանավը շարքից դուրս է գալիս, կամ վտանգվում է թռիչքի ընթացքում դրա անվտանգությունը, շահագործման մեջ գտնվող օդանավի մեջ սարքերի կամ նյութերի տեղադրմանը կամ դրանց փորձին, կեղծ տեղեկություններ հայտնելուն, որոնք կարող են վտանգել օդանավի անվտանգությունը թռիչքի ընթացքում: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002թ. հոկտեմբերի 10-ին:
4. «**Միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց, այդ թվում՝ դիվանագիտական ներկայացուցիչների դեմ կատարվող հանցագործությունները կանխարգելելու և պատժելու մասին**» 1973թ. կոնվենցիա: Կոնվենցիան ուղղված է միջազգային պաշտպանությունից օգտվող անձի սպանության,

առևանգման կամ նրա անձի կամ ազատության դեմ ցանկացած ոտնձգությանը: Այն մասնակից պետություններին նման հանցագործությունների համար կոչ է անում սահմանել համապատասխան պատիժներ՝ հաշվի առնելով դրանց ծանրության բնույթը: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994թ. հունիսի 17-ից:

5. «**Պատանդներ վերցնելու դեմ պայքարի մասին**» 1979թ. միջազգային կոնվենցիա: Կոնվենցիան պատանդները վերցնելը համարում է հանցագործություն: Նման հանցագործություն կատարած անձ է համարում նրան, ով վերցնում կամ պահում և սպառնում է սպանել, վնաս հասցնել կամ շարունակել պահել այլ անձանց՝ նպատակ ունենալով ստիպել երրորդ կողմին, մասնավորապես՝ պետությանը, միջազգային միջկառավարական կազմակերպությանը, ֆիզիկական կամ իրավաբանական անձին կամ անձանց խմբին կատարել որևէ գործողություն կամ ձեռնպահ մնալ դրա կատարումից՝ պատանդին ազատելը դնելով որպես ակնհայտ կամ ոչ ակնհայտ պայման: Նշված հանցագործությունների կատարման համար յուրաքանչյուր կողմ պետություն համապատասխան պատժամիջոցներ է սահմանում: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004թ. ապրիլի 15-ից:

6. «**Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին**» 1979թ. կոնվենցիա: Կոնվենցիան քրեական պատասխանատվություն է սահմանում միջուկային նյութերի ապօրինի պահպանման, օգտագործման, տեղափոխման կամ գողության համար և քրեականացնում է միջուկային նյութեր օգտագործելու սպառնալիքը՝ մահվան, լուրջ վնասվածքների կամ գույքի էական վնաս պատճառելու համար: Այն պարտավորում է պետություններին ապահովել միջուկային նյութերի խաղաղ օգտագործումը, պահպանումը և տեղափոխումը երկրի տարածքում, ինչպես նաև միջազգային համագործակցությունն այս ոլորտում: Կոնվենցիան Հայաստանի

Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. սեպտեմբերի 23-ից:

7. «**1971թ. սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին Կոնվենցիան լրացնող՝ միջազգային քաղաքացիական ավիացիան սպասարկող օդանավակայաններում բռնության ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին**» 1988թ. արձանագրություն: Սույն արձանագրությամբ 1971թ. Մոնրեալի կոնվենցիայի դրույթները տարածվում են ոչ միայն օդանավերում տեղի ունեցող բռնությունների, այլ նաև ահաբեկչական գործողությունների վրա, որոնք տեղի են ունենում միջազգային քաղաքացիական ավիացիայի կողմից սպասարկվող օդանավակայաններում: Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002թ. հոկտեմբերի 10-ից:

8. «**Ծովային նավագնացության անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին**» 1988թ. կոնվենցիա**:** Կոնվենցիան սահմանում է իրավական ռեժիմ միջազգային ծովային նավարկության և միջազգային ավիացիայի դեմ ուղղված գործողությունների համար: Սույն կոնվենցիայով հանցագործություն է որակավորվում նավի վրա գտնվող անձանց նկատմամբ բռնություն գործադրելը, եթե այդ գործողությունը կարող է սպառնալ նավարկության անվտանգությանը, եթե որևէ անձ զավթում է նավը կամ ուժով կամ ուժի սպառնալիքով կամ վախեցնելու որևէ այլ ձևով վերահսկողություն է իրականացնում նավի նկատմամբ; ավերում է նավը կամ վնաս է պատճառում նավին կամ դրա բեռին, որը կարող է սպառնալ տվյալ նավի անվտանգ նավարկությանը; որևէ ձևով նավի վրա սարքավորում կամ նյութ է տեղադրում կամ այն տեղադրելու նպատակով կատարում է գործողություն, որը կարող է վնաս պատճառել այդ նավին կամ դրա բեռին; ավերում է ծովային նավագնացության սար-

քավորումը կամ դրան լուրջ վնաս է պատճառում կամ դրա շահագործման լուրջ խոչընդոտներ է ստեղծում; ակնհայտ կեղծ տեղեկություններ է հայտնում՝ դրանով սպառնալիք ստեղծելով նավի անվտանգ նավարկության համար և այլն: Հայաստանի Հանրապետության համար այն ուժի մեջ է մտել 2005թ. սեպտեմբերի 6-ից:

9. «**Մայրցամաքային ելուստի վրա տեղակայված նավամատույցի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասի**ն» 1988թ. արձանագրություն**:** Այս արձանագրությունը նույնպիսի իրավական ռեժիմ է սահմանում մայրցամաքային ելուստի վրա տեղակայված նավամատույցի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ, ինչպիսին սահմանված է նմանօրինակ գործողությունների պարագայում միջազգային ավիացիոն ոլորտում**:** Հայաստանի Հանրապետության համար այն ուժի մեջ է մտել 2005թ. սեպտեմբերի 6-ից:

10. «**Պլաստիկ պայթուցիկ նյութերի հայտնաբերման նպատակով դրանց դրոշմադրման մասին**» կոնվենցիա՝ ստորագրված 1991թ. մարտի 1-ին Մոնրեալում: Համաձայն այս կոնվենցիայի՝ յուրաքանչյուր մասնակից պետություն անհրաժեշտ և արդյունավետ միջոցներ պետք է ձեռնարկի իր տարածքում չդրոշմադրված պայթուցիկ նյութերի արտադրումն արգելելու և կանխելու, չդրոշմադրված պայթուցիկ նյութերի՝ իր տարածք ներմուծելը և իր տարածքից արտահանելն արգելելու և կանխելու համար: Հայաստանի Հանրապետության համար այն ուժի մեջ է մտել 2005թ. սեպտեմբերի 20-ից*:*

11. «**Ահաբեկչական ռմբահարումների դեմ պայքարի մասին**» 1997թ. կոնվենցիա**:** Կոնվենցիան համընդհանուր իրավական ռեժիմ է սահմանում հասարակական վայրերում պայթուցիկ կամ այլ մահաբեր սարքերի ապօրինի և կանխամտածված օգտագործման համար, որոնք նպատակ ունեն մահ կամ այլ լուրջ վնաս պատճառել: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004թ. ապրիլի 15-ից:

12. «**Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին**» 1999թ. կոնվենցիա: Կոնվենցիան պահանջում է անդամ-պետություններից քայլեր ձեռնարկել ահաբեկչության ֆինանսավորումը խոչընդոտելու համար, անկախ նրանից, թե այդպիսի ֆինանսավորումը իրականացվում է ուղղակիորեն կամ անուղղակիորեն կամ այն կազմակերպությունների միջոցով, որոնք հայտարարում են, որ ունեն բարեգործական, համայնքային կամ մշակութային նպատակներ, այն կառույցների կողմից, որոնք ներգրավված են արգելված գործողություններում, ինչպիսիք են թմրանյութերի ապօրինի շրջանառությունը և զենքի տեղափոխումը և այլն: Կոնվենցիան պարտավորեցնում է պետություններին պատասխանատվության ենթարկել ահաբեկիչներին ֆինանսավորող անձանց: Այն նախատեսում է ահաբեկչական գործունեության համար նախատեսված միջոցների բացահայտում, արգելափակում և առգրավում, ինչպես նաև առգրավված միջոցների փոխանակում այլ պետությունների հետ՝ ըստ դեպքի և հանգամանքի: Կոնվենցիան սահմանում է, որ բանկային գաղտնիքն այլևս բավարար հիմք չի հանդիսանալու համագործակցությունից հրաժարվելու համար: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004թ. ապրիլի 15-ից:
13. «**Միջուկային ահաբեկչական գործողությունների դեմ պայքարի մասին**» 2005թ. կոնվենցիա: Այն գործողությունների բավականին լայն շրջանակ է իր մեջ ներառում, այդ թվում գործողություններ, որոնք թիրախավորում են ատոմակայաններն ու միջուկային ռեակտորները: Կոնվենցիան անդրադառնում է սպառնալիքներին կամ նման հանցագործություններ կատարելու փորձերին կամ դրանց կատարմանը որպես հանցակից մասնակցելուն, նախատեսում է հանցագործների արտահանձնում կամ հետապնդում, հորդորում է պետություններին համագործակցել ահաբեկչական հարձակումները կանխելու ուղղությամբ՝ տեղեկատվության փոխանակման և քրեական հետաքննությունների կամ արտահանձնման ըն-

թացակարգերի շուրջ և այլն: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2010թ. հոկտեմբերի 22-ից:

14. «**Ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում արտահանձման և փոխադարձ իրավական աջակցության մասին**» 2008թ. կոնվենցիա: Կոնվենցիան սահմանում է ահաբեկչության դեմ պայքարի նպատակով փոխադարձ իրավական օգնության և արտահանձնման մեխանիզմներ, կոչ է անում յուրաքանչյուր մասնակից պետության նշանակել պատասխանատու մարմին, որի միջոցով փոխանցվելու կամ ստացվելու են կոնվենցիայի շրջանակներում նախատեսված դեպքերում իրավաբանական օգնության և (կամ) արտահանձնման հայցերը: Այն սահմանում է, որ իրավախախտման կամ արտահանձնման հայցը ենթակա չէ մերժման՝ քաղաքական դրդապատճառներով պայմանավորված: Կոնվենցիայի շրջանակներում անդամ-պետությունները պարտավորվում են միմյանց տրամադրել հնարավորինս լայն փոխադարձ իրավական աջակցություն: Կոնվենցիան սահմանում է նաև, որ մասնակից պետությունները չեն կարող վկայակոչել բանկային գաղտնիքը՝ կոնվենցիայով նախատեսված քրեական գործերով փոխադարձ իրավական օգնություն տրամադրելու մերժումն արդարացնելու համար:

15. «**Միջազգային քաղաքացիական ավիացիային վերաբերող անօրինական գործողությունները կասեցնելու մասին**» 2010թ. կոնվենցիա: Կոնվենցիան սահմանում է քաղաքացիական ավիացիայի ոլորտում նախատեսվող հանցագործությունների տեսակները, որոնց համար կոնվենցիային կողմ հանդիսացող յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է խիստ պատժամիջոցներ կիրառել: Այն սահմանում է նաև մասնակից պետությունների իրավասությունները կատարված հանցագործությունների և իրավախախտումների պարագայում, ինչպես նաև հանցագործներին արտահանձնման ենթարկելու դեպքերը:

16. **«Օդանավերի ապօրինի բռնագրավման դեմ պայքարի մասին»** կոնվենցիայի 2010թ. լրացուցիչ արձանագրություն: Արձանագրությունը նախատեսում է օդանավերի ապօրինի բռնագրավման դեմ պայքարի մասին 1970թ. Հաագայում ստորագրված կոնվենցիայի մի շարք դրույթների ճշգրտումներ, լրացումներ և փոփոխություններ:

2005թ. երեք լրացումներ կատարվեցին գործող կոնվենցիաներում՝ ուղղված ահաբեկչության սպառնալիքի վերացմանը, մասնավորապես՝ «Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» կոնվենցիայում, «Ծովային նավագնացության ապահովության դեմ ուղղված անօրինական գործողություններն արգելափակելու մասին» կոնվենցիայում և «Մայրցամաքային ելուստի վրա տեղակայված նավամատույցի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին» կոնվենցիայի արձանագրությունում: Կատարված լրացումները վավերացվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

1972թ. ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովն ընդունել է թիվ 3034 բանաձևը՝ առաջարկելով ստեղծել Հատուկ կոմիտե, որը պետք է զբաղվեր ահաբեկչության դեմ պայքարի հարցերով, սակայն ջանքերն ավարտվեցին ապարդյուն: 1994թ. ահաբեկչության դեմ պայքարի հարցը տեղ գտավ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից ընդունված «Միջազգային ահաբեկչության վերացմանն ուղղված միջոցների մասին» 1994թ. դեկտեմբերի 9-ի՝ 49/60 բանաձևին կից հռչակագրում, որտեղ ՄԱԿ-ի անդամ-պետությունները դատապարտում են ահաբեկչական բոլոր գործողությունները, մեթոդներն ու գործելակերպը՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ և ում կողմից են դրանք իրականացվել: Ի հավելումն այս Հռչակագրին՝ 1996թ. ստեղծվեց Ահաբեկչության դեմ պայքարի հատուկ կոմիտեն, որի շրջանակներում 2000թ. ի վեր ՄԱԿ-ի անդամ-պետություններն աշխատում են Միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համապարփակ կոնվենցիայի մշակման ուղղությամբ: Այսպիսով, Հատուկ կոմիտեի ստեղծմամբ ահաբեկչության դեմ պայքարը հայտնվեց ՄԱԿ-ի ուշադրության կենտրոնում:

1997թ.-ից ի վեր գործում է ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակը, որի գործունեության օրակարգում է նաև միջազգային հանցագործությունների, այդ թվում և ահաբեկչության դեմ պայքարի հարցը:

2006թ. ՄԱԿ-ի Գլոբալ հակաահաբեկչական ռազմավարության ընդունմանն ընդառաջ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը հանդես եկավ զեկույցով՝ ներկայացնելով մի շարք առաջարկություններ, որոնք ձևավորեցին ահաբեկչության դեմ միջազգային պայքարի շրջանակը՝ հիմնված հինգ հիմնարար տարրերի վրա.

1. Համոզել մարդկանց և տարբեր խմբավորումներին ահաբեկչությունից հրաժարվելու կամ ահաբեկչությանն աջակցելու անհրաժեշտությունից
2. Զրկել ահաբեկիչներին հարձակումներ իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր միջոցներից
3. Կանխել պետությունների կողմից ահաբեկչության աջակցմանը
4. Ընդլայնել պետությունների հնարավորությունները՝ ուղղված ահաբեկչությունն արմատախիլ անելուն
5. Պաշտպանել մարդու իրավունքները:

Որպես հիմք ընդունելով Գլխավոր քարտուղարի առաջարկությունները՝ 2006թ. սեպտեմբերի 8-ին ընդունվեց ՄԱԿ-ի Գլոբալ հակաահաբեկչական ռազմավարությունը: Այն կարևոր քայլ էր ահաբեկչության դեմ պայքարում, որտեղ անդամ-պետությունները կարևորեցին ահաբեկչության դեմ միասնական պայքարի անհրաժեշտությունը և հանձն առան նպաստելու այս հարցին: Ռազմավարության մեջ ամրագրված է, որ ժամանակակից աշխարհում ահաբեկչությունը համարվում է միջազգային անվտանգության ու խաղաղության ամենալուրջ սպառնալիքներից մեկը: Նշվում է նաև, որ ահաբեկչությունը չպետք է և չի կարող ասոցացվել կրոնական պատկանելության, ազգության, քաղաքակրթության կամ որևէ էթնիկ խմբի հետ, և կոչ է արվում միջազգային հանրությանը միանալ ահաբեկչության դեմ պայքարի շրջանակում ընդունված բոլոր կոնվենցիաներին, արձանա-

գրություններին, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի և Անվտանգության խորհրդի կողմից ընդունված որոշումներին:

ՄԱԿ-ի Գլոբալ հակաահաբեկչական ռազմավարությունը չորս հիմնական ուղղություն է իր մեջ ներառում, որոնք էլ ձևավորում են ահաբեկչության դեմ պայքարի ժամանակակից ձևերն ու ուղենիշները: Մասնավորապես՝

1. Միջոցառումներ՝ ուղղված ահաբեկչության տարածմանը նպաստող պայմանների վերացմանը
2. Ահաբեկչության կանխարգելում և դրա դեմ պայքար
3. Պետությունների կարողությունների ավելացում ահաբեկչության կանխարգելման ու դրա դեմ պայքարի գործում և այս ոլորտում ՄԱԿ-ի համակարգի դերի բարձրացում
4. Մարդու իրավունքների համընդհանուր պաշտպանության և օրենքի գերակայության՝ որպես ահաբեկչության դեմ պայքարի հիմնարար միջոցի սահմանում:

1. **Ահաբեկչության տարածմանը նպաստող պայմանների վերացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներ**

1. Երկար տարիներ ընթացող հակամարտությունների խաղաղ կարգավորումը, ինչը կնպաստի ահաբեկչության դեմ գլոբալ պայքարին:
2. ՄԱԿ-ի հովանու ներքո իրականացնել նախաձեռնություններ, միջոցառումներ ու ծրագրեր՝ ուղղված ժողովուրդների, քաղաքակրթությունների, կրոնների, համոզմունքների միջև երկխոսության խթանմանը և հանդուրժողականության սերմանմանը:
3. Խրախուսել համաշխարհային մշակույթը, էթնիկ, ազգային և կրոնական հանդուրժողականութունը, հարգանքը դեպի բոլոր կրոններ և համոզմունքներ՝ իրականացնելով համապատասխան կրթական և հանրային իրազեկմանն ուղղված ծրագրեր:
4. Շարունակել ջանքեր գործադրել, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում միջազգայնորեն ստանձնած պարտավո-

րությունների շրջանակներում ձեռնարկել միջոցներ և օրենքի ուժով արգելել ու կանխել ահաբեկչական գործողությունների հրահրումը և դրանց իրագործումը:

5. Արմատախիլ անել աղքատությունը և խթանել դինամիկ տնտեսական աճը, կայուն զարգացումը և համընդհանուր բարգավաճումը:
6. Հաշվի առնելով գործազրկության աճող միտումը հատկապես երիտասարդների շրջանում՝ նվազեցնել մարգինալիզացումը, դրա հետևանքով առաջացող օտարացման զգացողությունը, որը նպաստում է ծայրահեղականության աճին և ահաբեկիչների հավաքագրմանը:
7. Կայուն տնտեսական և սոցիալական զարգացմանը նպաստելու նպատակով խորացնել համագործակցությունը և աջակցության ծավալը օրենքի գերակայության, մարդու իրավունքների և արդյունավետ կառավարման ոլորտներում:
8. Կամավոր սկզբունքով ստեղծել օգնության տրամադրման ազգային համակարգեր, որոնք, հաշվի առնելով ահաբեկչության զոհերի, նրանց ընտանիքների պահանջները, կնպաստեն վերջիններիս կյանքի բարելավմանը:

2. Ահաբեկչության կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող միջոցառումները

1. Ձեռնպահ մնալ ահաբեկչական գործողություններ կազմակերպելուց, դրդելուց, մասնակցությունից, ֆինանսավորելուց, խրախուսելուց կամ հանդուրժելուց և ձեռնարկել գործնական քայլեր՝ ուղղված նրան, որպեսզի համապատասխան տարածքները չօգտագործվեն ահաբեկչական վայրեր կամ ուսումնական ճամբարներ ստեղծելու, ահաբեկչական գործողություններ նախապատրաստելու և կազմակերպելու համար:
2. Համագործակցել այլ պետությունների հետ ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում, հայտնաբերել ահաբեկիչներին, պատասխանատվության ենթարկել և մերժել ապաստանի տրամադրման հարցում:

3. Ապահովել ահաբեկիչների արտահանձնման, քրեական հետապնդման, ապաստանի մերժման գործընթացները ազգային և միջազգային իրավունքի, մասնավորապես մարդու իրավունքների, փախստականի իրավունքների և միջազգային հումանիտար իրավունքի շրջանակներում:
4. Ակտիվացնել համագործակցությունը ստույգ տեղեկատվության փոխանակման հարցում:
5. Ամրապնդել պետությունների միջև համագործակցությունն այնպիսի ոլորտներում, որոնք կարող են նպաստել ահաբեկչության առաջացմանն ու տարածմանը, մասնավորապես հանցավորության դեմ պայքարի ոլորտում, այդ թվում՝ թմրամիջոցների և զենքի ապօրինի առևտրի, փողերի լվացման, ինչպես նաև միջուկային, քիմիական, կենսաբանական, ռադիոակտիվ և պոտենցիալ մահացու նյութերի մաքսանենգության իրականացմանը:
6. Միանալ ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիային և դրա երեք լրացուցիչ արձանագրություններին:
7. Ապաստանի տրամադրումից առաջ նախաձեռնել բոլոր հնարավոր միջոցները՝ հավաստիանալու համար, որ ապաստան հայցող անձը մասնակից չի ահաբեկչական գործողություններին և չի անդամակցում այդպիսի խմբավորումներին:
8. Հորդորում է համապատասխան տարածաշրջանային և ենթատարածաշրջանային կազմակերպություններին ստեղծել ահաբեկչության դեմ պայքարի ամուր մեխանիզմներ և համապատասխան կենտրոններ:
9. Ահաբեկչության դեմ պայքարի միջազգային կենտրոնի ստեղծումն անհրաժեշտ է դիտարկել ահաբեկչության դեմ պայքարի գործում միջազգային հանրության կողմից ներդրվող ջանքերի մաս:
10. Հորդորել պետություններին գործել միջազգային չափանիշներին համահունչ, որոնք ամրագրված են փողերի լվացմանն առնչվող 40 հանձնարարականներում և ահաբեկչության ֆի-

նանսավորմանն առնչվող 9 հատուկ հանձնարարականներում:

11. ՄԱԿ-ի համակարգում ստեղծել կենսաբանական նախադեպերի միասնական համապարփակ տվյալների շտեմարան:
12. Համագործակցել ինտերնետում ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում, ինտերնետն օգտագործել որպես ահաբեկչության դեմ պայքարի գործիք:
13. Ակտիվացնել համագործակցությունը տարբեր մակարդակներում՝ սահմանային և մաքսային հսկողությունն ամրապնդելու ուղղությամբ ահաբեկիչների շարժը կանխելու և նրանց բացահայտելու նպատակով:
14. Հորդորել Հակաահաբեկչական հանձնաժողովին և նրա գործադիր մարմնին շարունակել համագործակցել պետությունների հետ ահաբեկչության մեջ ներգրավված անձանց տեղաշարժը վերահսկելու և այս ոլորտում համապատասխան օրենքներ և միջոցառումներ ձեռնարկելու գործում:
15. Հորդորել Անվտանգության խորհրդի 1267 (1999) բանաձևով ստեղծված Հանձնաժողովին շարունակել աշխատել ՄԱԿ-ի կողմից սահմանված պատժամիջոցների շրջանակներում Ալ-Քաիդայի, Թալիբանի և այս կառույցներին հարող անձանց և կազմակերպությունների դեմ կիրառվող ազատ տեղաշարժի արգելքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ:
16. Ակտիվացնել ջանքերը նույնականացման փաստաթղթերի և ճամփորդական փաստաթղթերի անվտանգության ամրապնդման, դրանց կեղծման կամ ապօրինի օգտագործման կանխարգելման և հայտնաբերման ուղղությամբ:
17. Բարելավել միջուկային, քիմիական, կենսաբանական կամ ռադիոլոգիական զենքի կամ նյութերի օգտագործմամբ ահաբեկչական հարձակումներին արձագանքելու պլանավորման գործընթացում քայլերի համակարգումը, մասնավորապես վերանայել գործող միջգերատեսչական համակարգման մեխանիզմների արդյունավետությունը ահաբեկչության զոհերին և

պետություններին օգնության և աջակցության ցուցաբերման հարցում:

18. Ներդնել բոլոր ջանքերը հատուկ խոցելի օբյեկտների պաշտպանության և անվտանգության ապահովման ուղղությամբ, ինպիսին են, օրինակ, ենթակառուցվածքները, հանրային տարածքները, ինչպես նաև բարելավել պետությունների արձագանքման արդյունավետությունը ահաբեկչական հարձակումների պարագայում:

3. **Պետությունների կարողությունների զարգացումը ահաբեկչության կանխարգելման և դրա դեմ պայքարի և այս ոլորտում ՄԱԿ-ի համակարգի դերի ամրապնդման գործում**

1. Հորդորում է պետություններին կամավոր հավելյալ ներդրումներ կատարել և ֆինանսական տարբեր աղբյուրներ գտնել հակաահաբեկչական պայքարի շրջանակում ավելի շատ ծրագրեր իրականացնելու համար:
2. Փոխանակվել ահաբեկչության դեմ պայքարի շրջանակում ձեռք բերված կարողությունների զարգացման փորձով:
3. Ահաբեկչության դեմ պայքարի շրջանակում ներկայացվող տարբեր հաշվետվությունների համար մշակել միասնական մոտեցում՝ կրկնօրինակներից խուսափելու համար:
4. Ձեռնարկել համապատասխան միջոցներ, այդ թվում նաև անհրաժեշտության դեպքում կանոնավոր ոչ պաշտոնական հանդիպումներ տեղեկավության առավել հաճախակի փոխանակման նպատակով:
5. Ողջունել Գլխավոր քարտուղարի քարտուղարության կազմում Հակաահաբեկչական գործողությունների իրականացման հանձնախումբ ներառելու մտադրությունը՝ առկա ռեսուրսների օգտագործմամբ ՄԱԿ-ի շրջանակում համակարգումը բարելավելու համար:
6. Հորդորել, որպեսզի Հակաահաբեկչական կոմիտեն և նրա գործադիր մարմինը շարունակեն բարելավել հակաահաբեկչական պայքարում տեխնիկական աջակցության տրամադրումն ու դրա արդյունավետությունը:

7. Հորդորում է, որպեսզի ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակը Հակաահաբեկչական կոմիտեի և նրա գործադիր մարմնի հետ համատեղ ընդլայնի պետություններին տեխնիկական աջակցության տրամադրումը, ինչը կնպաստի համապատասխան միջազգային կոնվենցիաների և արձանագրությունների իրականացմանը:
8. Հորդորում է Արժույթի միջազգային հիմնադրամին, Համաշխարհային բանկին, ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակին և Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպությանը ընդլայնել համագործակցությունը պետությունների հետ, նրանց աջակցելով՝ իրականացնել փողերի լվացման դեմ պայքարի և ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված ստանձնած միջազգային նորմերը և պարտականությունները:
9. Առաջարկում է Ատոմային էներգիայի միջազգային գործակալությանը և Քիմիական զենքի արգելման կազմակերպությանը իրենց մանդատների շրջանակներում շարունակել աջակցել պետություններին զարգացնելու վերջիններիս կարողությունները ահաբեկիչների հասանելիությունը միջուկային, կենսաբանական, քիմիական կամ ռադիոակտիվ նյութերին արգելափակելու ուղղությամբ:
10. Խրախուսել Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը ակտիվացնել տեխնիկական աջակցությունը պետություններին՝ բարելավելու իրենց հանրային առողջապահական համակարգը կենսաբանական զենքի օգտագործմամբ ահաբեկչական հարձակումները կանխելու և դրանց նախապատրաստվելու համար:
11. Շարունակել ՄԱԿ-ի շրջանակում աջակցել պետություններին սահմանային հսկողության համակարգերի, մեխանիզմների և սահմանապահ մարմինների բարեփոխումների և արդիականացման ուղղությամբ:
12. Առաջարկել Միջազգային ծովային կազմակերպությանը, Համաշխարհային մաքսային կազմակերպությանը և Քաղա-

քացիական ավիացիայի միջազգային կազմակերպությանը ամրապնդել իրենց համագործակցությունը և համագործակցել պետությունների հետ՝ փոխադրումների անվտանգության բնագավառում առկա որևէ թերություն հայտնաբերելու և համապատասխան աջակցություն ցուցաբերելու համար:

13. Հորդորում է ՄԱԿ-ին համագործակցել անդամ-պետությունների և համապատասխան միջազգային, տարածաշրջանային և ենթատարածաշրջանային կազմակերպությունների հետ հատկապես խոցելի թիրախների դեմ ուղղված ահաբեկչական հարձակումները կանխելու համար նորարար միջոցների բացահայտման և տարածման գործում:

4. **Մարդու իրավունքների համընդհանուր պաշտպանությանն ու օրենքի գերակայության սահմանմանն ուղղված միջոցառումները**

1. Պետությունները պետք է ապահովեն, որպեսզի ահաբեկչության դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկված ցանկացած միջոցառում համապատասխանի միջազգային պայմանագրերով մարդու իրավունքների ոլորտում ստանձնած իրենց պարտավորություններին, մասնավորապես՝ փախստականների իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի նորմերին:
2. Դիտարկել հիմնական միջազգային պայմանագրերին անհապաղ միանալու հարցը, որոնք առնչվում են մասնավորապես մարդու իրավունքներին, փախստականների իրավունքին և միջազգային մարդասիրական իրավունքին:
3. Ազգային մակարդակում ստեղծել արդարադատության այնպիսի արդյունավետ համակարգերը, որոնք թույլ կտան միջազգային իրավունքով նախատեսված պարտավորությունների համաձայն յուրաքանչյուր անձին, ով ներգրավված է ահաբեկչական գործողությունների ֆինանսավորման, պլանավորման, նախապատրաստման կամ կատարման մեջ կամ ահաբեկչական գործողություններին աջակցել է, հետապնդել և միջազգային իրավունքի «արտահանձնիր կամ հետապնդիր»

(aut dedere aut judicare) սկզբունքի հիման վրա ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

4. Աջակցել Մարդու իրավունքների խորհրդին հատկապես ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում:
5. Աջակցել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի գործառնական ներուժի ամրապնդմանը՝ ընդգծելով վերջինիս դաշտային գործողությունների ընդլայնման և դաշտային ներկայության կարևորությունը:
6. Աջակցել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խթանմանն ու պաշտպանությանն ուղղված հատուկ զեկուցողի աշխատանքներին՝ ահաբեկչության դեմ պայքարի հարցում:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ահաբեկչության դեմ պայքարի շրջանակում ընդունված բանաձևերը

Ահաբեկչության դեմ պայքարի գործում առանցքային նշանակություն ունեն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի (ԱԽ) մի շարք բանաձևեր, որոնք ահաբեկչության դեմ պայքարի միջազգային օրակարգի անքակտելի մասն են կազմում:

ՄԱԿ-ի հակաահաբեկչական պայքարի շրջանակներում ընդունված հիմնական բանաձևերից **1267**-ը՝ ընդունված 1999թ., ամբողջովին վերաբերում էր Աֆղանստանում գործող Թալիբան շարժմանը, որը կոչ է անում վերջինիս կատարել ԱԽ բոլոր նախորդ բանաձևերը, իսկ պետություններին հորդորում է ձեռնարկել մի շարք միջոցառումներ, մասնավորապես թույլ չտալ որևէ թռչող սարքին տեղաշարժվել երկրների տարածքում, սառեցնել Թալիբանի բոլոր ֆինանսական ակտիվները, ակտիվացնել համագործակցությունը միմյանց հետ այս հարցում:

ԱԽ թիվ **1373** բանաձևը, որն ընդունվել է 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական ակտից օրեր անց՝ 2001թ. սեպտեմբերի 28-ին, կոչ է անում բոլոր պետություններին արգելափակել ահաբեկիչների կողմից իրենց պետությունների տարածքում որևէ ֆինանսական գոր-

ծարքի իրականացումը կամ տնտեսական ռեսուրսների օգտագործումը, արգելել բոլոր քաղաքացիներին որևէ ձևով աջակցել կամ որևէ ծառայություն մատուցել ահաբեկիչներին, ոչ մի դեպքում ապաստան չտրամադրել նրանց, ովքեր այս կամ այն կերպ կարող են մասնակից կամ ներգրավված լինել ահաբեկչությանը, ամրապնդել համագործակցությունը ահաբեկիչներին քրեական հետապնդման ենթարկելու հարցում և այլն:

ԱԽ թիվ **1540 բանաձևը**՝ ընդունված 2004թ., վերաբերում է միջուկային, քիմիական կամ կենսաբանական զենքին և դրա տարածմանը: Բանաձևը, նախևառաջ, հորդորում է պետություններին ոչ մի պարագայում թույլ չտալ ոչ պետական կառույցներին այս տեսակ զենքերի հետ որևէ առնչություն ունենալ և արդյունավետ միջոցներ ձեռնարկել դրանց նկատմամբ վերահսկողությունն ավելացնելու համար:

ՄԱԿ-ի ԱԽ **1566 բանաձև,** որն ընդունվեց 2004թ. հոկտեմբերի 8-ին, կրկին դատապարտում է ահաբեկչությունը և ընդգծում, որ այն միջազգային անվտանգության և խաղաղության սպառնալիքներից մեկն է: Բանաձևը կոչ է անում պետություններին համագործակցել ահաբեկչության դեմ պայքարում տարբեր ուղղություններով և ընդգծում, որ ահաբեկչական որևէ գործողություն չի կարող արդարացվել որևէ քաղաքական, փիլիսոփայական, գաղափարախոսական, ռասային, էթնիկ, կրոնական կամ որևէ այլ պատրվակով ու հիմնավորմամբ:

ԱԽ **1624 բանաձևը**՝ ընդունված 2005թ. սեպտեմբերի 14-ին, կոչ է անում պետություններին միջազգային իրավունքի շրջանակներում ստանձնած պարտավորությունների սահմաններում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ահաբեկչության դեմ պայքարի համար, մասնավորապես՝

ա) օրենսդրորեն արգելել ահաբեկչական գործողությունների իրականացումը,

բ) ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ այն թույլ չտալու համար,

գ) մերժել այն անձանց ապաստանի դիմումը, ում մասին առկա են հավաստի տվյալներ ահաբեկչական գործողությունների հետ առնչություն ունենալու մասին:

Բանաձևը կոչ է անում պետություններին ուժեղացնել սահմանային անվտանգությունը, այդ թվում նաև կեղծ ճամփորդական փաստաթղթերի օգտագործումը կանխելու համար:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԳՐՈՒՄՆԵՐ

1. Ուսումնասիրել և ներկայացնել ահաբեկչության դեմ պայքարի առաջին փորձը Ազգերի լիգայի շրջանակներում: Բացահայտել այն խոչընդոտները, որոնք նպաստեցին ահաբեկչության դեմ պայքարում մշակված առաջին կոնվենցիայի չվավերացմանը:
2. Ուսումնասիրել ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում ընդունված միջազգային կոնվենցիաներն ու արձանագրությունները: Գնահատել դրանց արդյունավետությունը միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում:
3. Քննադատական վերլուծության ենթարկել ահաբեկչության դեմ պայքարը Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում: Գնահատել այդ պայքարի արդյունավետությունը:
4. Ներկայացնել ՄԱԿ-ի Ահաբեկչության դեմ պայքարի մասին կոնվենցիայի փորձերը և վերլուծել ՄԱԿ-ի Գլոբալ հակաահաբեկչական ռազմավարությունը:
5. Համեմատական վերլուծությամբ ներկայացնել ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ընդունված հիմնական բանաձևերը:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Ահաբեկչության դեմ պայքարի փորձը Ազգերի լիգայի շրջանակներում:

2. Ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետության գնահատումը Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում:
3. Ահաբեկչության դեմ պայքարը՝ որպես միջազգային անվտանգային հիմնախնդիր:
4. Միջազգային ահաբեկչության դեմ պայքարի իրավաքաղաքական հիմնախնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենագրություններ

1. **Антонович И., Особенков О., Панкова Л., Щегорцов В.**, Международный опыт профилактики терроризма, М., 2010, с. 90-126.
2. **Вишняков Я., Бондаренко Г., Васин С., Грацианский Е.,** Основы противодействия терроризму, М., 2006, с. 51-58.
3. **Грачев С.,**Терроризм и контртеррористическая деятельность: вопросы теории, Нижний Новгород, 2010, с. 8-27.
4. **Метелев С.,** Современный терроризм и методы антитеррористической деятельности: Монография, Омск, 2008, с. 107-184.
5. **Примаков Е.,** Мир после 11 сентября и вторжение в Ирак, М., 2003, 200 с.
6. **United Nation's Office on Drugs and Crime**, University Module Series, Module 1, Introduction to International Terrorism, 32 p.
7. **United Nation's Office on Drugs and Crime**, University Module Series, Module 3, Overview of the International Counter-Terrorism Legal Framework, https://www.unodc.org/e4j/terrorism/module-3/index.html, հասանելի է՝ 31.03.2021թ.:

Գիտական հոդվածներ

1. **Зонов Ф.,** Международный терроризм и мировой опыт борьбы с ним, Власть, 2011, № 12, с. 103-106.

2. **Кузнецов А., Маршакова Н.,** Международный терроризм в условиях глобализации, Юридический мир, 2010, № 9, с. 8-13.
3. **Abrahms M.,** What Terrorists Really Want: Terrorist Motives and Counterterrorism Strategy, International Security, 2008, vol. 32, № 4, p. 78–105.
4. **Andréani G.,** La guerre contre le terrorisme : un succès incertain et coûteux**,** Politique étrangère, 2011, № 2, p. 253-266.
5. **Franck T., Lockwood B.,** Preliminary Thoughts Towards an International Convention on Terrorism, The American Journal of International Law, 1974, Vol. 68, №1, p. 69-90.
6. **Ruperez J.,** The United Nations in the fight against terrorism, UN Counter-Terrorism Executive Directorate, 29 p., https://www.un.-org/sc/ctc/wp-content/uploads/2017/01/2006_01_26_cted_lectu-re.pdf, հասանելի է՝ 29.03.2021թ.:
7. **Saul B.,** The Legal Response of the League of Nations to Terrorism, Journal of International Criminal Justice*,* 2006, vol. 4, № 1, p. 78-102, https://doi.org/10.1093/jicj/mqi096, հասանելի է՝ 12.02.2021թ.:

Իրավական փաստաթղթեր

1. Ազգերի լիգայի Ահաբեկչության կանխարգելման և դատապարտման մասին կոնվենցիա (1934թ.)
2. Միջազգային ահաբեկչության վերացմանն ուղղված միջոցների մասին 1994թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 49/60 բանաձևին կից հռչակագիր
3. ՄԱԿ-ի Գլոբալ հակաահաբեկչական ռազմավարությունը
4. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1267 (1999թ.) բանաձև
5. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1373 (2001թ.) բանաձև
6. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1540 (2004թ.) բանաձև
7. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1566 (2004թ.) բանաձև
8. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1624 (2005թ.) բանաձև
9. Օդանավերի մեջ կատարվող հանցագործությունների և որոշակի այլ գործողությունների մասին 1963թ. կոնվենցիա

10. Օդանավերի անօրինական զավթումների դեմ պայքարի մասին 1970թ. կոնվենցիա
11. Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին 1971թ. կոնվենցիա
12. Միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց, այդ թվում՝ դիվանագիտական ներկայացուցիչների դեմ կատարվող հանցագործությունները կանխարգելելու և պատժելու մասին 1973թ. կոնվենցիա
13. Պատանդներ վերցնելու դեմ պայքարի մասին 1979թ. կոնվենցիա
14. Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին 1979թ. կոնվենցիա
15. 1971թ. սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին Կոնվենցիան լրացնող՝ միջազգային քաղաքացիական ավիացիան սպասարկող օդանավակայաններում բռնության ապօրինի գործողությունների դեմ պայքարի մասին 1988թ. արձանագրություն
16. Ծովային նավագնացության անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին 1988թ. կոնվենցիա
17. Մայրցամաքային ելուստի վրա տեղակայված նավամատույցի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին 1988թ. արձանագրություն
18. Պլաստիկ պայթուցիկ նյութերի հայտնաբերման նպատակով դրանց դրոշմադրման մասին 1991թ. կոնվենցիա
19. Ահաբեկչական ռմբահարումների դեմ պայքարի մասին 1997թ. կոնվենցիա
20. Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին 1999թ. կոնվենցիա
21. Միջուկային ահաբեկչական գործողությունների դեմ պայքարի մասին 2005թ. կոնվենցիա

22. Ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում արտահանձման և փոխադարձ իրավական աջակցության մասին 2008թ. կոնվենցիա
23. Միջազգային քաղաքացիական ավիացիային վերաբերող անօրինական գործողությունները կասեցնելու մասին 2010թ. կոնվենցիա
24. Օդանավերի ապօրինի բռնագրավման դեմ պայքարի մասին կոնվենցիայի 2010թ. լրացուցիչ արձանագրություն

ԹԵՄԱ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Ահաբեկչության դեմ պայքարը տարածաշրջանային կազմակերպությունների օրակարգային հիմնախնդիրներից մեկն է: Այն ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի, ԱՊՀ-ի, ՀԱՊԿ-ի, ՇՀԿ-ի, ԵԽ-ի, ԵՄ-ի և մի շարք այլ կազմակերպությունների գործունեության առանցքային ոլորտներից է:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (**ԵԱՀԿ)** հակաահաբեկչական պայքարի շրջանակներում իր գործունեությունը դիտարկում է ՄԱԿ-ի շրջանակներում: Ահաբեկչության դեմ պայքարի ուղղությամբ ընդունված ԵԱՀԿ հիմնարար փաստաթուղթն է 2001թ. «Ահաբեկչության դեմ պայքարի բուխարեստյան գործողությունների պլանը»: Բուխարեստյան գործողությունների պլանի հետ մեկտեղ ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում մի շարք պարտավորություններ և քայլեր ներառված են նաև ԵԱՀԿ այլ փաստաթղթերում, մասնավորապես՝ «Ահաբեկչության կանխարգելման և դրա դեմ պայքարի ԵԱՀԿ խարտիայում» (2002թ.), ՄԱԿ-ի հակաահաբեկչական ռազմավարությանն աջակցելու մասին ԵԱՀԿ Նախարարների Խորհրդի հայտարարությունում (2007թ.), «21-րդ դարում անվտանգության սպառնալիքներին հակազդելուն և կայունության ապահովմանն ուղղված ԵԱՀԿ ռազմավարությունում» (2003թ.), որտեղ ահաբեկչությունը որակավորում է, որպես անվտանգության ոլորտում միջազգային անկայունության հիմնական պատճառներից մեկը, «Աստանայի դեկլարացիայում» (2010թ.), որտեղ ԵԱՀԿ անդամ-պետությունները հանձն առան առավել սերտ և համակարգված դարձնել համագործակցությունն այս ուղղությամբ:

Հակաահաբեկչական պայքարում ԵԱՀԿ գործունեությունը՝ ուղղված ահաբեկչության տարածմանը նպաստող պատճառների վերացմանը, իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

1. Բացասական սոցիալ-տնտեսական գործոնների վերացում, ինչպես, օրինակ՝ արդյունավետ կառավարման բացակայություն, կոռուպցիայի և գործազրկության ցուցանիշի նվազեցում:
2. Ժողովրդավարական ինստիտուտների և օրենքի գերակայության ամրապնդում, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների շուրջ պետության և հասարակության միջև երկխոսության խրախուսում:
3. Անհանդուրժողականության և խտրականության դեմ պայքար տարբեր խմբերի նկատմամբ:
4. Հակամարտությունների խաղաղ կարգավորում:

ԵԱՀԿ ահաբեկչության դեմ պայքարի ռազմավարական ուղղություններն են՝

1. Աջակցություն ահաբեկչության դեմ պայքարի միջազգային իրավական բազայի դրույթների կատարմանը և ահաբեկչությանն առնչվող քրեական գործերով միջազգային համագործակցության ընդլայնմանը:
2. Պայքար ծայրահեղականության և և արմատականացման դեմ, որը կարող է հանգեցնել ահաբեկչության առաջացմանն ու տարածմանը:
3. Ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելում:
4. Ինտերնետը ահաբեկչության նպատակով օգտագործելու միջոցի արգելում:
5. Ահաբեկչության դեմ պայքարում համագործակցության, երկխոսության նպաստում, այդ թվում՝ պետության և մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության, ՁԼՄ-ների միջև:
6. Պետությունների կարողությունների ավելացում զանգվածային ոչնչացման զենքի չտարածմանն ուղղված ՄԱԿ-ի ԱԽ 1540 (2004) բանաձևի իրականացման հարցում:
7. Ճամփորդական փաստաթղթերի հուսալիության բարձրացում:

8. Հակաահաբեկչական միջոցառումների համատեքստում մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների խթանում:

Ահաբեկչության դեմ պայքարը Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (**ՆԱՏՕ**) առաջնային խնդիրներից մեկն է: Դաշինքի համար այն օրակարգային խնդիր դարձավ հատկապես 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական ակտից հետո, որից մեկ ամիս անց՝ 2001թ. հոկտեմբերի 9-ին, սկսվեց ՆԱՏՕ-ի «Eagle Assist» անվանումը ստացած օպերացիան: 2002թ. հոկտեմբերի 26-ին ՆԱՏՕ-ն սկսեց իրականացնել «Active Endeaviour» («Ակտիվ ջանքեր») անվանումով ռազմական գործողությունները Միջերկրական ծովում, իսկ 2006թ.-ից՝ Սև ծովում: Ըստ էության, սա դաշինքի պատմության մեջ գրանցված առաջին դեպքն էր, երբ ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունները որակավորվեցին որպես զինված հարձակում, և կիրառվեց Հյուսիսատլանտյան համաձայնագրի 5-րդ հոդվածը, այն է՝հավաքական պաշտպանության մասին դրույթը, որը նախատեսում է հավաքական աջակցության տրամադրում դաշինքի անդամ-պետություններից որևէ մեկի վրա հարձակման պարագայում: Ռազմական գործողության նպատակն էր թույլ չտալ ահաբեկիչների և զենքերի տեղաշարժը ծովային ճանապարհով: Այն ուղղված էր նաև էներգառեսուրսների տարանցման անվտանգության ապահովմանը: ՆԱՏՕ-ի այս գործողություններին 2006թ. միացավ նաև Ռուսաստանի Դաշնությունը:

2002թ. մայիսին ՆԱՏՕ-ի Ռեյկյավիկի գագաթնաժողովի ժամանակ կայացվեց անկյունաքարային նշանակություն ունեցող որոշում ՆԱՏՕ-ի համար, համաձայն որի դաշինքը կգործի այնտեղ, որտեղ անհրաժեշտ է պայքարել ահաբեկչության դեմ: Ըստ էության, սա կարևոր որոշում էր, քանի որ այն վերջ տվեց ՆԱՏՕ-ի հետագա գործունեության և դրա նպատակայնության շուրջ մղվող խոսակցություններին: Այն ՆԱՏՕ-ի համար ուղի հարթեց դեպի Անվտանգության աջակցության միջազգային ուժերին դաշինքի հետագա մասնակցությանը:

ՆԱՏՕ-ի հակաահաբեկչական գործունեությունը նույնպես տեղի է ունենում ՄԱԿ-ի Ահաբեկչության դեմ պայքարի ռազմավարության, ինչպես նաև այլ իրավական ակտերի շրջանակներում: Ահաբեկչության դեմ պայքարի ուղղությամբ ՆԱՏՕ-ն ընդունել է մի շարք հիմնարար փաստաթղթեր և ուղենիշներ, մասնավորապես՝ «Ահաբեկչության դեմ պաշտպանության ռազմական հայեցակարգը», «Ահաբեկչության դեմ պայքարի գործընկերության գործողությունների պլանը», հինգ նախաձեռնություններ միջուկային, կենսաբանական և քիմիական պաշտպանության մասին, քաղաքացիական բնակչության պաշտպանության, այդ թվում նաև «Քաղաքացիական–արտակարգ իրավիճակների պլանավորման գործողությունների ծրագիրը», «Պաշտպանություն ընդդեմ ահաբեկչության աշխատանքային ծրագիրը»: Կարևոր նշանակություն ունի նաև ՆԱՏՕ-ի դերակատարումը հակահրթիռային պաշտպանության և կիբերպաշտպանության համատեքստում:

2010թ. նոյեմբերին տեղի ունեցած լիսաբոնյան գագաթնաժողովի ժամանակ ընդունվեց ՆԱՏՕ-ի ռազմավարական հայեցակարգը, որտեղ հստակ սահմանվում է, որ ահաբեկչությունն ուղղակի սպառնալիք է ներկայացնում ՆԱՏՕ-ի անդամ-պետությունների և բնակչության, ինչպես նաև միջազգային խաղաղության ու կայունության պահպանման համար: Այդ իսկ պատճառով ՆԱՏՕ-ն հանձն է առնում պայքարել այս գլոբալ չարիքի դեմ, այդ թվում նաև ռազմական ճանապարհով:

2012թ. մայիսին Չիկագոյի գագաթնաժողովի ժամանակ ընդունվեց ՆԱՏՕ-ի՝ Ահաբեկչության դեմ պայքարի քաղաքական ուղեցույցը և վերջինիս իրականացման համար նախատեսվող Գործողությունների ծրագիրը: ՆԱՏՕ-ի՝ Ահաբեկչության դեմ պայքարի քաղաքական ուղեցույցը խարսխված է երեք հիմնական ոլորտների վրա՝ իրազեկվածության բարձրացում, կարողությունների զարգացում և մասնակցություն տարատեսակ հակաահաբեկչական գործողություններին:

ՆԱՏՕ-ն ունի զարգացած ինստիտուցիոնալ կառույցներ: Մասնավորապես, կենտրոնակայանում գործում է ահաբեկչության հետա-

խուզության բաժինը, որը հետևում է ՆԱՏՕ-ի կողմից իրականացվող գործողություններին ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում: Իսկ Նեապոլում տեղակայված է ՆԱՏՕ-ի համատեղ ուժերի հրամանատարության ներքո գործում է տարածաշրջանային հանգույցը, որի նպատակն է նպաստել ՆԱՏՕ-ի կողմից տարածաշրջանում առաջացող ճգնաժամերի կանխատեսմանն ու արագ արձագանքմանը: 2017թ.-ից ՆԱՏՕ-ն անդամակցում է «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման դեմ պայքարող միջազգային կոալիցիային:

Ահաբեկչության դեմ պայքարը ներառված է նաև Անկախ պետությունների համագործակցության (**ԱՊՀ**) օրակարգում: 1999թ. Մինսկում ընդունվեց ԱՊՀ անդամ-պետությունների կողմից ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում Ահաբեկչության դեմ պայքարի պայմանագիրը: 2000թ.-ից ի վեր գործում է ԱՊՀ հակաահաբեկչական կենտրոնը, որի նպատակն է ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում ներգրավված ԱՊՀ պետությունների համապատասխան մարմինների գործողությունների համակարգումը: 2005թ. Կազանում ընդունվեց «ԱՊՀ ահաբեկչության և ծայրահեղականության այլ դրսևորումների դեմ պայքարի համագործակցության հայեցակարգը», որը նախանշում է համագործակցության մի շարք ուղղություններ ահաբեկչության և ծայրահեղության դրսևորումների դեմ պայքարում թե՛ իրավական, թե՛ գործառնական և ինստիտուցիոնալ մակարդակներում, մասնավորապես ահաբեկչության և ծայրահեղականության այլ դրսևորումների կանխարգելման, բացահայտման, կանխման և հետաքննման հարցերով համագործակցության իրականացման նպատակով: ԱՊՀ, մասնավորապես ԱՊՀ միջպառլամենտական ասամբլեայի շրջանակներում ընդունվել են նաև մի շարք այլ իրավական ակտեր և որոշումներ:

Ահաբեկչության դեմ պայքարն իրականացվում է նաև Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (**ՀԱՊԿ**) շրջանակներում: ՀԱՊԿ շրջանակներում ահաբեկչության դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկվող ջանքերը իրականացվում են ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի կողմից, որը կազմված է

անդամ-պետությունների ղեկավարներից, Արտաքին գործերի նախարարների խորհրդի և Անվտանգության խորհրդի քարտուղարների կոմիտեի կողմից: 2005թ.-ից Անվտանգության խորհրդի քարտուղարների կոմիտեի կազմում գործում է Ահաբեկչության դեմ պայքարի հարցով աշխատանքային խումբ, որը և համակարգում է ՀԱՊԿ գործունեությունն այս ուղղությամբ: ՀԱՊԿ շրջանակներում կարևոր քայլ էր ահաբեկչական կազմակերպությունների մեկ միասնական շտեմարանի ստեղծումը, ինչը նորարար մոտեցում էր հակաահաբեկչական պայքարում և թույլ է տալիս արագ արձագանքել հնարավոր սպառնալիքներին:

2016թ. ընդունվեց մինչև 2025թ. նախատեսված ՀԱՊԿ Հավաքական անվտանգության ռազմավարությունը, որտեղ ՀԱՊԿ անդամ-պետություններն հանձն են առել մշակել և իրականացնել կանխարգելիչ և հատուկ միջոցառումների համատեղ շարք ահաբեկչության և կրոնական ծայրահեղականության դեմ պայքարի շրջանակներում, ներառյալ ահաբեկչական և ծայրահեղական գործունեության մեջ ներգրավված անձանց հետախուզումը, ահաբեկչական և ծայրահեղական գործունեության ֆինանսավորումը և համապատասխան ռեսուրսների տրամադրումը:

ՀԱՊԿ-ի գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում այլ հակաահաբեկչական հարցերով զբաղվող կառույցների հետ փոխգործակցության հաստատումը: Մասնավորապես, 2005թ. հունվարին Ղազախստանում տեղի ունեցավ միջազգային, տարածաշրջանային և ենթատարածաշրջանների կազմակերպությունների մասնակցությամբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ահաբեկչության դեմ պայքարի կոմիտեի հատուկ նիստը: 2017թ. Մոսկվայում ՀԱՊԿ քարտուղարության նախաձեռնությամբ տեղի ունեցավ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԱՊՀ-ի և ՇՀԿ համապատասխան հակաահաբեկչական կառույցների ներկայացուցիչների միջև հանդիպում, իսկ 2018թ. ստորագրվեց Համագործակցության հուշագիր ՀԱՊԿ քարտուղարության, ԱՊՀ Հակաահաբեկչական կենտրոնի և ՇՀԿ տարածաշրջանային հակաահաբեկչական կառույցի միջև:

Տարածաշրջանային համալիր անվտանգության ապահովումը, այդ թվում՝ ահաբեկչության, մասնավորապես՝ կիբերահաբեկչության, անջատողականության, ծայրահեղականության տարատեսակ դրսևորումների, կազմակերպված հանցավորության, թմրանյութերի անօրինական շրջանառության և միջազգային տեղեկատվական անվտանգության դեմ պայքարը, նաև Շանհայի համագործակցության կազմակերպության (**ՇՀԿ)** օրակարգային թեմաներից են:

ՇՀԿ-ում գործում է մշտական մարմին՝ ՇՀԿ Տարածաշրջանային հակաահաբեկչական կառույցը: Ահաբեկչության դեմ պայքարում ՇՀԿ-ը գործում է անդամ-պետությունների կողմից ընդունված մի շարք իրավական փաստաթղթերի, մասնավորապես «Ահաբեկչության, անջատողականության և ծայրահեղականության դեմ պայքարի» 2001թ. Շանհայի կոնվենցիայի (ստորագրված ՌԴ, ՉԺՀ, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի միջև), դրա իրականացման գործողությունների ծրագրի և 2010թ. «Ահաբեկչության դեմ պայքարի ՇՀԿ կոնվենցիայի» շրջանակներում՝ ուղղված ամեն տեսակ ծայրահեղականության դրսևորումներին, անդամ-պետությունների միջև համագործակցության ընդլայնմանն ու օրենսդրության բարելավմանը: ՇՀԿ ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում ՇՀԿ անդամ-պետությունների ղեկավարների կողմից 2017թ. ընդունվեց Աստանայի հայտարարությունը, որը շեշտադրում է հասարակության մեջ, հատկապես երիտասարդության շրջանում ռադիկալ մոտեցումների արմատախիլ անելու անհրաժեշտությունը և հորդորում անդամ-պետություններին ջանքեր ներդնել հասարակության շրջանում ռադիկալացման, ահաբեկչական գաղափարների և քարոզչության տարածման, քսենոֆոբիայի և անհանդուրժողականության տարբեր դրսևորումների դեմ:

Ահաբեկչության դեմ գլոբալ պայքարում ներգրավված տարածաշրջանային կառույցներից է Եվրոպայի խորհուրդը (**ԵԽ**): ԵԽ աջակցություն է ցուցաբերում անդամ-պետություններին ազգային օրենսդրության բարեփոխման, ահաբեկչության դեմ պայքարի իրավական շրջանակի ամրապնդման և միջազգային համագործակցության ընդլայնման հարցերում: Ահաբեկչության դեմ պայքարի ոլոր-

տում ԵԽ-ի հիմնական համակարգող մարմինը ԵԽ-ի Ահաբեկչության դեմ պայքարի կոմիտեն է, որի հիմնական գործառույթը անդամ-պետությունների կողմից ԵԽ-ի մշակած իրավական գործիքակազմի կիրառման ապահովումն ու համապատասխան փորձագիտական աջակցության տրամադրումն է: ԵԽ-ի կողմից մշակվել և ընդունվել են մի շարք իրավական փաստաթղթեր: Ահաբեկչության հարցը ոչ ուղղակիորեն արծարծվում է նաև 1950թ. ԵԽ-ի կողմից ընդունված «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի» մի շարք հոդվածներում, մասնավորապես հոդված 2-ում՝ կյանքի իրավունքի մասին, հոդված 3-ում՝ խոշտանգումների արգելման մասին, հոդված 5-ում՝ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի մասին:

1977թ. Եվրոպայի խորհրդի կողմից ընդունվեց «Ահաբեկչության դեմ պայքարի մասին եվրոպական կոնվենցիան, իսկ 2003թ. վերջինիս կից արձանագրությունը: 2005թ. Վարշավայում ընդունվեց «Ահաբեկչության կանխարգելման մասին Եվրոպական կոնվենցիան», իսկ 2017թ. ուժի մեջ մտավ նրան կից արձանագրությունը: Կոնվենցիաներին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2016թ.:

Հարկ է նշել, որ 2004թ. ԵԽ-ն ընդունեց «Ահաբեկչության դեմ պայքարի հռչակագիրը», որտեղ մատնանշվել են ահաբեկչության դեմ պայքարի գործողությունների հետևյալ յոթ ռազմավարական կետերը.

1) ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում միջազգային համաձայնության խորացում և միջազգային ջանքերի ակտիվացում,

2) տնտեսական և ֆինանսական միջոցների նկատմամբ ահաբեկիչների և ահաբեկչական կազմակերպությունների հնարավորությունների չեզոքացում,

3) ԵՄ անդամ երկրների ներուժի համախմբում ահաբեկչության բացահայտման, հետաքննման, դատական հետապնդման, ինչպես նաև ահաբեկչական գործողությունների կանխման գործընթացում,

4) միջազգային փոխադրումների անվտանգության ապահովում և սահմանային կետերի վերահսկման արդյունավետության բարձրացում,

5) ԵՄ անդամ երկրների հնարավորությունների ընդլայնում ահաբեկչական գործողությունների հետևանքների վերացման ուղղությամբ,

6) ահաբեկչության աջակցմանը, տարածմանը և ահաբեկիչների շարքերի համալրմանը նպաստող գործոնների վերացում,

7) ԵՄ շրջանակներում նպատակային միջոցառումների կազմակերպում՝ ահաբեկչական դրսևորումներ ունեցող երրորդ երկրներում հակաահաբեկչական հնարավորությունների կատարելագործման համար:

ԵԽ-ն մշակել և ընդունել է «Ահաբեկչության դեմ պայքարի 2018-2022թթ. ռազմավարությունը»: Ռազմավարությունը կառուցված է երեք հիմնական առանցքների շուրջ՝ կանխարգելում, հետապնդում և պաշտպանություն:

Ահաբեկչության դեմ պայքարում ակտիվ դերակատարում ունի Եվրոպական միությունը **(ԵՄ)**: Ահաբեկչության դեմ պայքարի ուղղությամբ ԵՄ-ի կողմից ձեռնարկվող միջոցառումները ամրագրված են 2005թ. ընդունված «Ահաբեկչության դեմ պայքարի ԵՄ ռազմավարության» մեջ, որը նախատեսում է ահաբեկչության դեմ պայքարի չորս հիմնական ուղղություններ `

1. Ահաբեկչության աջակցության համար նախազգուշացում և ահաբեկիչների հետագա սերունդների ձևավորման կանխարգելում:
2. Քաղաքացիների և առանցքային նշանակություն ունեցող ենթակառուցվածքների պաշտպանություն:
3. Ահաբեկիչների հետապնդում և վերջիններիս հանդեպ հետաքննության անցկացում, ահաբեկիչների պլանների, տեղաշարժի և հաղորդակցության խոչընդոտում, ֆինանսական աղբյուրներից և նյութերի հասանելիությունից զրկում, ահաբեկիչներին պատասխանատվության ենթարկում:
4. Ահաբեկչական գործողություններին և դրանց հետևանքների նվազեցմանն ուղղված համակարգված արձագանք:

Ահաբեկչության դեմ պայքարի ռազմավարությանը կից մշակվել է Շրջանակային համաձայնագիր՝ ուղղված այս ոլորտում ԵՄ-ի ան-

դամ-պետությունների միջև համագործակցության ամրապնդմանը: 2017թ. մարտի 7-ին ԵՄ-ի խորհուրդն ընդունեց Ահաբեկչության դեմ պայքարի ԵՄ դիրեկտիվը: Այն, ըստ էության, եկավ փոխարինելու Շրջանակային համաձայնագրին և սահմանեց խաղի նոր կանոններ, որոնք ամրապնդեցին ԵՄ-ի ահաբեկչության գործողությունների կանխարգելմանն ուղղված նորմատիվ-իրավական հիմքը: Մասնավորապես, քրեորեն պատժելի հանցագործությունների շարքին դասվեցին ահաբեկչական խմբավորումների տեղաշարժը ԵՄ-ի տարածքում կամ ԵՄ-ի տարածքից դուրս:

ԵՄ-ում ահաբեկչության դեմ պայքարի կարևոր ուղղություն է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարը: 2015թ. Եվրոպական խորհրդարանը և Եվրոպական խորհուրդն ընդունեցին ԵՄ 2015/849 դիրեկտիվը, որտեղ սահմանվում են ԵՄ-ի ֆինանսական համակարգը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման օգտագործման նպատակով չթույլատրելու ընդհանուր կանոնները: Դեռևս սեպտեմբերի 11-ի ահաբեկչությանը արձագանքման շրջանակներում ստեղծվեց ահաբեկչական գործողություններին մասնակցած անձանց, խմբերի և կազմակերպությունների միասնական ցանկ, որոնց նկատմամբ կիրառվում են մի շարք սահմանափակումներ, մասնավորապես՝ Ալ-Քաիդայի, Թալիբանի, ԻԼԻՊ-ի հետ առնչություն ունեցող անձանց ֆինանսական միջոցների սառեցում և այլն:

Այլ կարևորագույն փաստաթղթերի շարքին է դասվում նաև քիմիական, կենսաբանական, ռադիոլոգիական և միջուկային չթույլատրված նյութերի օգտագործման արգելքին, այսօրինակ նյութերի հայտնաբերման համար անհրաժեշտ կարողությունների զարգացմանը, ինչպես նաև ահաբեկչական գործողություններին արձագանքելուն ուղղված գործողությունների պլանը: 2004թ.-ից ի վեր Մադրիդյան ահաբեկչությունից հետո գործում է ԵՄ-ում ահաբեկչության հակազդման համակարգողի հաստիքը, որի հիմնական գործառույթներն են ԵՄ խորհրդի գործունեության գերակա ուղղությունների համար համապատասխան քաղաքական առաջարկությունների մշա-

կումը, ԵՄ-ի և երրորդ երկրների միջև միջազգային համագործակցությանը նպաստելուն ուղղված քայլերի մշակումն ու համակարգումը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԳՐՈՒՄՆԵՐ

1. Վերլուծել ՆԱՏՕ-ի գործունեության ռազմաքաղաքական բաղադրիչը ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում:
2. Համեմատական վերլուծությամբ ներկայացնել ահաբեկչության դեմ տարվող պայքարի առանձնահատկությունները ԱՊՀ, ՀԱՊԿ և ՇՀԿ շրջանակներում:
3. Ուսումնասիրել ահաբեկչության դեմ իրականացվող պայքարի արդյունավետությունը եվրոպական մայրցամաքում:
4. Ուսումնասիրել և ներկայացնել ահաբեկչության դեմ պայքարը եվրոպական իրավունքի շրջանակներում:
5. Գնահատել տարածաշրջանային կազմակերպությունների հակաահաբեկչական պայքարի նորմատիվ իրավական բազան և մեխանիզմները:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Ահաբեկչության կանխարգելմանն ուղղված միջազգային մեխանիզմների և միջոցառումների գնահատումը:
2. «Իսլամական ֆունդամենտալիզմ» երևույթի ծագումը, սփռումը և գաղափարական հենքը:
3. Ահաբեկչության տարածման հիմնական պատճառներն ու միտումները Եվրոպայում:
4. Եվրոպական Միության և ԵՄ-ի առանձին պետությունների անվտանգային քաղաքականությունն ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենագրություններ

1. **Антонович И., Особенков О., Панкова Л., Щегорцов В.**, Международный опыт профилактики терроризма, М., 2010, с. 90-126.
2. **Возженников А.,** Международный терроризм: борьба за геополитическое господство, М., 2005, 528 с.
3. **Вишняков Я., Бондаренко Г., Васин С., Грацианский Е.,** Основы противодействия терроризму, М., 2006, с. 51-58.
4. **Грачев С.,** Терроризм и контртеррористическая деятельность: вопросы теории, Нижний Новгород, 2010, с. 8-27.
5. **Метелев С.,** Современный терроризм и методы антитеррористической деятельности: Монография, Омск, 2008, с. 107-184.
6. **Устинов В.,** Международный опыт борьбы с терроризмом, М., 2002., с. 45-144.

Գիտական հոդվածներ

1. **Волеводз А.,** Международно-правовая криминализация международного терроризма, Вестник МГИМО, 2014, № 2(35), с. 150-160.
2. **Дорохина К.,** Анализ стратегии Организации договора о коллективной безопасности в сфере противодействия терроризму, Вестник Московского государственного университета, 2018, Политические науки, № 12(5), с. 62-77.
3. **Жолболдин Т.,** Борьба с терроризмом – стандарты Совета Европы, Вестник Института законодательства Республики Казахстан, 2009, № 4(16), с. 145-151.
4. **Ледях И.,** Борьба с международным терроризмом и защита прав человека, Труды Института государства и права Российской академии наук, 2013, № 1, с. 137-163.

5. **Attar O.,** Les modalités actuelles de la lutte contre le terrorisme dans les États européens, Civitas Europa, 2015, № 1 (34), p. 169-190.
6. **Bures O., Bätz S**., European Union and the fight against terrorism: a differentiated integration theory perspective, Asia Europe Journal, 2020, № 19**, p.** 75–104, https://doi.org/10.1007/s10308-020-00590-3, հասանելի է՝ 11.02.2021թ.:
7. **Krisztina H.,** Le Conseil de l'Europe et la lutte contre le terrorisme international, European Integration Studies, 2002, № 1, p. 56-64.
8. **Santamato S.,** The New NATO Policy Guidelines on Counterterrorism: Analysis, Assessments, and Actions, Strategic Perspectives № 13, Center for Strategic Research, Institute for National Strategic Studies, 2013, 58 p.
9. **Wernert S**., L'Union européenne et la lutte contre le terrorisme, Politique étrangère, 2018, № 2, p. 133-144.

Իրավական փաստաթղթեր

1. ԵԱՀԿ 2001թ. Ահաբեկչության դեմ պայքարի Բուխարեստյան գործողությունների պլան
2. Ահաբեկչության կանխարգելման և դրա դեմ պայքարի ԵԱՀԿ խարտիա (2002թ.)
3. ԵԱՀԿ նախարարների խորհրդի ահաբեկչության դեմ պայքարի մասին որոշումներ
4. 21-րդ դարում անվտանգության սպառնալիքներին հակազդելուն և կայունության ապահովմանն ուղղված ԵԱՀԿ ռազմավարություն (2003թ.)
5. ԵԱՀԿ Աստանայի դեկլարացիա (2010թ.)
6. ԵԱՀԿ Ահաբեկչության դեմ պայքարի միասնական շրջանակ (2012թ.)
7. ՆԱՏՕ-ի՝ Ահաբեկչության դեմ պաշտպանության ռազմական հայեցակարգ
8. ՆԱՏՕ-ի՝ Ահաբեկչության դեմ պայքարի գործընկերության գործողությունների պլան

9. ՆԱՏՕ-ի 5 նախաձեռնություններ միջուկային, կենսաբանական և քիմիական պաշտպանության վերաբերյալ
10. ՆԱՏՕ-ի՝ Քաղաքացիական բնակչության պաշտպանության, այդ թվում նաև քաղաքացիական – արտակարգ իրավիճակների պլանավորման գործողությունների ծրագիր
11. ՆԱՏՕ-ի՝ Ահաբեկչությունից պաշտպանության աշխատանքային ծրագիր
12. ՆԱՏՕ-ի ռազմավարական հայեցակարգ (2010թ.)
13. ՆԱՏՕ-ի՝ Ահաբեկչության դեմ պայքարի քաղաքականության ուղեցույց (2012թ.)
14. ՀԱՊԿ Հավաքական անվտանգության ռազմավարություն (2016թ.)
15. ԱՊՀ Ահաբեկչության դեմ պայքարի պայմանագիր (1999թ.)
16. ԱՊՀ Ահաբեկչության և ծայրահեղականության այլ դրսևորումների դեմ պայքարի համագործակցության հայեցակարգ (2005թ.)
17. Հանցավոր շահույթների օրինականացման (լվացման) դեմ պայքարի և ահաբեկչության ֆինանսավորման մասին ԱՊՀ համաձայնագիր (2007թ.)
18. Ահաբեկչության, անջատողականության և ծայրահեղականության դեմ պայքարի Շանհայի կոնվենցիա (2001թ.)
19. Շանհայի համագործակցության կազմակերպության ահաբեկչության դեմ կոնվենցիա (2010թ.)
20. Շանհայի համագործակցության կազմակերպության շրջանակներում ընդունված Աստանայի հայտարարություն (2017թ.)
21. Ահաբեկչության դեմ պայքարի եվրոպական կոնվենցիա (1977թ.)
22. Ահաբեկչության դեմ պայքարի եվրոպական կոնվենցիային կից արձանագրություն (2003թ.)
23. Ահաբեկչության կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիա (2005թ.)
24. Ահաբեկչության կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիային կից արձանագրություն (2017թ.)

25. Եվրոպայի խորհրդի՝ Ահաբեկչության դեմ պայքարի 2018-2022թթ. ռազմավարություն
26. Ահաբեկչության դեմ պայքարի ԵՄ ռազմավարություն (2005թ.)
27. Ծայրահեղականության և ահաբեկչական կառույցների հավաքագրման պայքարի դեմ ԵՄ ռազմավարություն (2008թ., 2014թ.)
28. Ահաբեկչության դեմ պայքարի ԵՄ ռազմավարության կից շրջանակային որոշում
29. Ահաբեկչության դեմ պայքարի ԵՄ դիրեկտիվ (2017թ.)
30. Փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով ֆինանսական համակարգի օգտագործումը չթույլատրելու մասին կանխելու մասին ԵՄ 2015/849 դիրեկտիվ (2015թ.)
31. ԵՄ Քիմիական, կենսաբանական, ռադիոլոգիական և միջուկային անվտանգության ռիսկերի դեմ պատրաստվածության բարձրացմանն ուղղված գործողությունների ծրագիր (2017թ.)

ԹԵՄԱ ՎԵՑԵՐՈՐԴ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՆ ԱՌԱՆՁԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԵՐՈՒՄ: ՀԱԿԱԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ահաբեկչության դեմ պայքարն օրակարգային խնդիր դարձավ ԱՄՆ-ի համար 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո, որն, ըստ էության, բեկումնային եղավ ահաբեկչության դեմ պայքարի ժամանակակից փուլում: Սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո ԱՄՆ-ի գլխավորությամբ ստեղծվեց Հակաահաբեկչական կոալիցիա, ահաբեկչական գործողությունների պատասխանատվությունն իր վրա վերցրեց Ալ-Քաիդա խմբավորումը, որի առաջնորդ Ուսամա Բեն Լադենը հայտարարեց, որ ահաբեկչությունը ԱՄՆ-ի դեմ իրականացվել է վերջինիս հակահիսլամական և իսրայելամետ քաղաքականության պատճառով և պահանջեց դուրս բերել ԱՄՆ-ի զորքերը Աֆղանստանից: Սեպտեմբերի 11-ի իրականացված ահաբեկչությունն ի հայտ բերեց նաև նոր տերմինների գործածում, ինչպես, օրինակ՝ «իսլամիստ ծայրահեղականներ»: Իսլամը սկսվեց նույնականացվել ահաբեկչության հետ:

Սեպտեմբերի 11-ից հետո բազմաթիվ պետություններ, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնությունը, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը, իրենց զորակցությունը հայտնեցին ԱՄՆ-ին: Այն բեկումնային եղավ նաև ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության համար, քանի որ վերջինս ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում որդեգրեց կոշտ արտաքին քաղաքականություն, որի առաջին հարվածն ուղղվեց Թալիբանին:

2002թ. սեպտեմբերին ԱՄՆ-ի գործող վարչակազմը ներկայացրեց ԱՄՆ-ի ազգային անվտանգության նոր ռազմավարությունը, որում ԱՄՆ-ն ահաբեկչությունը որակում է որպես երկրի թիվ մեկ թշնամի և հայտարարում է ահաբեկչության դեմ գլոբալ պատերազմ: Նոր ռազմավարությունում նշվում էր, որ Ալ-Քաիդայից և Թալիբանից

բացի հազարավոր ահաբեկիչներ կան աշխարհի այլ ծայրերում, մասնավորապես Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, Եվրոպայում, Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում, Ասիայում, և Միացյալ Նահանգների առաջնային նպատակն է վերացնել ահաբեկչական խմբավորումներին, նրանց պարագլուխներին, նրանց նյութական միջոցներն ու ֆինանսական աղբյուրները: Նշված է, որ ԱՄՆ-ի վարչակարգը պարտավոր է հակահարված տալ բոլոր այն սպառնալիքներին, որոնք վտանգ են ներկայացնում ԱՄՆ-ի համար:

Սեպտեմբերի 11-ից անմիջապես հետո ԱՄՆ-ի վարչակազմը ստացավ քարտ-բլանշ Աֆղանստան ներխուժման համար, որն արտահայտվեց 2001թ. դեկտեմբերի 20-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ընդունված թիվ 1386 բանաձևով, համաձայն որի ստեղծվեց Անվտանգության աջակցության միջազգային ուժեր՝ ՆԱՏՕ-ի կողմից գլխավորվող միջազգային զինվորական կոնտիգենտ, որը գործում է Աֆղանստանի տարածքում: ԱՄՆ-ի զինված ուժերը նախաձեռնեցին «Անքակտելի ազատություն» անվանումը ստացած գործողությունը, որի նպատակն էր Աֆղանստանում ահաբեկիչների բազաների վերացումը, առաջնորդների բացահայտումը, քաղաքական կայունության վերականգնումը: ԱՄՆ-ի ներկայությունը Աֆղանստանում ծառայեց նաև մի շարք այլ արտաքին քաղաքական խնդիրներին՝ հատկապես հաշվի առնելով Աֆղանստանի աշխարհաքաղաքական դիրքը, ինչը թույլ էր տալիս ԱՄՆ-ին ուղղակի վերահսկողություն սահմանել Իրանի, Պակիստանի, Չինաստանի, ՌԴ-ի, Կենտրոնական Ասիայի մի շարք պետությունների, ինչպես նաև Կասպից ծովում տեղակայված էներգառեսուրսների և դրանց շուրջ ընթացող իրադարձությունների վրա:

2009թ. նոր վարչակարգի ձևավորումից հետո ԱՄՆ-ն փոփոխեց իր արտաքին քաղաքական կուրսը՝ դուրս գալով ռազմական հակամարտությունից և համաձայնության եկավ Թալիբանի՝ որպես ռազմաքաղաքական ուժի հետ երկրում կայունության ապահովման շուրջ: Այս փոփոխությունը համահունչ էր 2010թ. ընդունված ԱՄՆ-ի ազգային անվտանգության նոր ռազմավարությանը, համաձայն որի մերձավորարևելյան տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերը այսուհետև

պետք է պաշտպանվեն դիվանագիտական միջոցներով և ջանքերով՝ տարածաշրջանի պետություններին տնտեսական աջակցության ցուցաբերման, այլ ոչ ռազմական ներկայության միջոցով:

Ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում ստեղծվեցին ենթակառուցվածքներ և ռազմաբազաներ, մասնավորապես՝ Ուզբեկստանում՝ Խանաբեդում ու Կոկայդիում, Տաջիկստանում՝ Դուշանբեում ու Կուլյաբում, Ղրղզստանում՝ Մանասում, հետագայում վերանորոգվեց Ադրբեջանի օդանավակայանը՝ այն ամերիկյան ռազմական օդանավերին հարմարեցնելու համար, ինչը և ամրապնդեց ԱՄՆ-ի դիրքերը տարածաշրջանում: 2011թ. մայիսի 1-ին Ալ-Քաիդայի առաջնորդ Ուսամա Բեն Լադենը ոչնչացվեց, ինչը և խորհրդանշեց աֆղանական կամպանիայի ավարտը: 2014թ. Միացյալ Նահանգները սկսեց դուրս բերել զորքերը Աֆղանստանից:

Ահաբեկչության դեմ պայքարը շարունակվեց նաև ԱՄՆ կողմից իրականացվող իրաքյան կամպանիայի ժամանակ: Իրաք ներխուժման առիթ հանդիսացավ նաև Սադամ Հուսեյնին ուղղված մեղադրանքները միջազգային ահաբեկչության, մասնավորապես Ալ-Քաիդայի հետ առնչություն ունենալու, քիմիական զենք ունենալու մեջ, որը սպառնալիք էր ներկայացնում միջազգային անվտանգությանն ու խաղաղությանը: Ի տարբերություն Աֆղանստանում իրականացվող գործողությունների՝ ԱՄՆ-ին չհաջողվեց ստանալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համաձայնությունը Իրաքում ռազմական գործողություններ իրականացնելու համար, սակայն այն վերջինիս չխանգարեց 2003թ. ներխուժել Իրաք: 2011թ. ԱՄՆ-ն սկսեց դուրս բերել իր զորքերը Իրաքից:

Հետագայում Ալ-Քաիդայի և մի քանի այլ ծայրահեղ իսլամական խմբավորումների կողմից ստեղծվեց սուննիական իսալամական կազմակերպություն՝Իրաքի իսլամական պետությունը (ԻԻՊ), որի էմիր ընտրվեց 2010թ. Իրաքում Ալ-Քաիդայի առաջնորդներից մեկը՝ Աբու Բաքր Ալ-Բաղդադին, իսկ 2013թ. ԻԻՊ-ի, Սիրիայի և Լիբանանի տարածքում գործող սիրիական Ջեբխատ ան-Նուսրիի միավորման արդյունքում ստեղծվեց Իրաքի և Լևանտեի Իսլամական Պետությունը՝ ԻԼԻՊ-ը: Նպատակն էր Իրաքի, Սիրիայի և Լիբանանի տարած-

քում ստեղծել իսլամական էմիրություն, որի խալիֆ հռչակվեց Աբու Բաքր Ալ-Բաղդադին:

ԻԼԻՊ-ը կազմավորվեց որպես ռազմաքաղաքական կառույց՝ իսլամական ֆունդամենտալիզմի հիման վրա, որի կազմավորումը փոփոխեց տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը: 2014թ. Սպիտակ տունը, ստանալով Կոնգրեսի համաձայնությունը, սկսեց Իրաքում ԻԼԻՊ-ի հսկողության տակ գտնվող տարածքների ազատագրումը: Լայնամասշտաբ ռազմական գործողություններին ամերիկյան զորամիավորումներից բացի մասնակցեցին Իրաքի կառավարական բանակային զորամիավորումները, Փեշմերգայի զինյալները: Գործողությունները տեղի էին ունենում Իրաքի հյուսիսում, իսկ 2016թ. մարտին սկսվեցին Մոսուլի ազատագրման մարտերը, որոնք հաջող ավարտ ունեցան 2017թ. տարեսկզբին:

Ահաբեկչության դեմ պայքարն ընդգրկված է նաև ԱՄՆ-ի՝ 2017թ. ընդունված ազգային անվտանգության ռազմավարությունում, որտեղ հիմնական շեշտադրումը դրված է ջիհադիստական ահաբեկչական խմբավորումների, մասնավորապես ԻԼԻՊ-ի և Ալ-Քաիդայի դեմ պայքարի վրա: 2017թ. ԱՄՆ-ի վարչակարգի փոփոխման արդյունքում ԱՄՆ-ի համար առաջնային խնդիրներից մեկը հայտարարվեց ԻԼԻՊ-ի և Ալ-Քաիդայի ոչնչացումը: ԱՄՆ-ն Միջազգային ահաբեկչության հովանավոր հայտարարեց Իրանին: 2018թ. հոկտեմբերին ընդունվեց Ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը, համաձայն որի՝ ԱՄՆ-ն շարունակաբար ներդնելու է իր ջանքերը ահաբեկչական խմբավորումների որոնման, բացահայտման և վերացման, ահաբեկիչներին հասանելի ֆինանսական աղբյուրների ոչնչացման, ահաբեկչության դեմ պայքարի ժամանակակից միջոցների արդիականացման ուղղությամբ: Ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարությունն անդրադառնում է ահաբեկչությունը ֆինանսավորող և ահաբեկիչներին աջակցող պետությունների դեմ պայքարին, նշվում է որ Իրանի Իսլամական Հանրապետությունը նյութական և ֆինանսական աջակցություն է ցուցաբերում և վերապատրաստում Հեզբոլլահին, ինչպես նաև Բահրեյնում, Իրաքում, Սի-

րիայում և Յեմենում գործող այլ շիա իսլամական ռազմական խմբավորումներին, ՀԱՄԱՍ-ին, այլ պաղեստինյան խմբավորումներին:

Ահաբեկչությունը **Չինաստանի Ժողովրդական Հանրապետությանը** քաջածանոթ երևույթ է: Չինաստանի հարավարևմտյան Սինծյան-Ույղուրական մահմեդականաբնակ ինքնավար շրջանում գործում են մի շարք ահաբեկչական խմբավորումներ (Արևելյան Թուրքեստանի իսլամական շարժումը, Արևելյան Թուրքեստանի իսլամական ազատագրական կազմակերպությունը, Արևելյան Թուրքեստանի տեղեկատվական կենտրոնը և այլն), որոնք Չինասստանում մի շարք ահաբեկչական գործողություններ են նախաձեռնել և իրականացրել: Սինծյան-Ույղուրական ինքնավար շրջանում տիրող ահաբեկչական և անջատողական շարժմանը հանգամանալից անդրադարձ է կատարվում 2019թ. մարտին ՉԺՀ-ի կողմից հրապարակված «Ահաբեկչության և ծայրահեղականության դեմ պայքարը և մարդու իրավունքների պաշտպանություն Սինցզյան քաղաքում» սպիտակ գիրքը:

Չինաստանը ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում հիմնական ուշադրությունն ուղղում է ահաբեկչության կանխարգելմանը: Ահաբեկչության դեմ պայքարը մղվում է նաև օրենսդրական ոլորտում: 2001թ. մի շարք փոփոխություններ կատարվեցին 1979թ. ընդունված Քրեական օրենսգրքում, որոնք վերաբերում են ահաբեկչական խմբավորումների գործունեությանը մասնակցող անձանց:

Չինաստանում ահաբեկչական գործողություններ նախապատրաստելու և իրականացնելու համար նախատեսված է մահապատիժ, որի պատճառով միջազգային հանրությունը հաճախ դատապարտում է վերջինիս: Ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում օրենքի ուժով խստիվ վերահսկողություն է սահմանված համացանցի վրա: Չի թույլատրվում կրոնական ծայրահեղություն խորհրդանշող համապատասխան հագուստի և աքսեսուարների կրումը: Ռազմական ոստիկանությունում գործում է համապատասխան հակաահաբեկչական ստորաբաժանում:

Չինաստանն ահաբեկչության դեմ պայքարն իրականացնում է միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների շրջանակներում: Այս համատեքստում ՉԺՀ-ի համար առաջնային նշա-

նակություն ունի Շանհայի համագործակցության կազմակերպությունը, որի առաջնահերթ խնդիրներից է ահաբեկչության, անջատողականության և ծայրահեղականության դեմ պայքարը: Ավելին, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունն ահաբեկչության դեմ պայքարում համագործակցում է տարածաշրջանային մի շարք պետությունների հետ երկկողմ պայմանագրերի շրջանակներում, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, Պակիստանի, Կենտրոնական Ասիայի պետությունների (Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, Ուզբեկստան, Թուրքմենստան) հետ:

Ներպետական մակարդակում ՉԺՀ հակաահաբեկչական պայքարն իրականացնում է մի շարք օրենքների, մասնավորապես Ազգային անվտանգության մասին օրենքի, Քրեական օրենսգրքի և վերջինիս 9-րդ լրացման շրջանակներում, որոնք ընդունվել են 2015թ. և կարգավորում են պետության պայքարը ծայրահեղականության դեմ: Քրեական օրենսգրքի 9-րդ լրացումը ահաբեկչության և ծայրահեղության տարբեր տեսակների քարոզչության համար նախատեսում է 5-ից մինչև 7 տարի ազատազրկում, տուգանքներ, գույքի բռնագրավում՝ կախված քարոզչության տեսակից:

2016թ. ուժի մեջ մտավ Հակաահաբեկչական օրենքը, որը սահմանում է նմանօրինակ քրեական հանցագործության համար համապատասխան պատժամիջոցները:

Հատկանշական է, որ Հակաահաբեկչական օրենքը ահաբեկչությունը դիտարկում է նաև քարոզչության համատեքստում՝ ուղղված քաղաքական կամ գաղափարական նպատակների իրագործմանը, հասարակության շրջանում խուճապ ստեղծելուն, հասարակական անվտանգությունը վտանգելուն, անձանց կամ գույքի հանդեպ ոտնձգություններ իրականացնելուն պետական մարմիններին կամ միջազգային կառույցներին հարկադրելու միջոցով: Հակաահաբեկչական օրենքը ահաբեկչական գործողություն է համարում՝

ա) այնպիսի գործողությունների կազմակերպումը, պլանավորումը, նախապատրաստումը կամ իրականացումը, որոնք հանգեցնում են զոհերի կամ գույքի մեծ կորուստների, հասարակական օբյեկտնե-

րի վնասների, սոցիալական անկարգությունների և այլ լուրջ սոցիալական վտանգների առաջացմանը,

բ) ահաբեկչություն քարոզելը, ահաբեկչական գործողություններ հրահրելը կամ ահաբեկչություն քարոզող իրեր ունենալը և այլոց ստիպելը հասարակական վայրերում ահաբեկչությանը նպաստող կամ քարոզող հագուստ կամ նշաններ կրելը,

գ) ահաբեկչական կազմակերպությունների կազմավորումը, ղեկավարումը կամ դրանց անդամակցումը,

դ) ահաբեկչական կազմակերպություններին, ահաբեկչական գործողություններ իրականացնողներին ահաբեկչական ակտերի կամ ահաբեկչական գործունեության ուսուցմանն աջակցելու, օժանդակելու և նպաստելու համար տեղեկատվության, համապատասխան միջոցների, նյութերի, աշխատանքային ծառայությունների, համապատասխան տեխնոլոգիաների, վայրերի և այլնի տրամադրում,

ե) այլ ահաբեկչական գործողություններ:

Օրենքը նաև սահմանում է, որ ռադիոն, հեռուստաընկերությունները, համացանցը, մշակութային և կրոնական տարբեր կառույցներ պետք է իրականացնեն թիրախավորված հակաահաբեկչական քարոզչություն և կրթական ու իրազեկվածության բարձրացմանն ուղղված տարբեր միջոցառումներ ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Ուսումնասիրել և ներկայացնել այլ պետությունների կողմից իրականացվող գլոբալ ահաբեկչության դեմ պայքարը:
2. Ներկայացնել ահաբեկչության դեմ պայքարը ԱՄՆ քաղաքական օրակարգում:
3. Վերլուծել և գնահատել ԱՄՆ-ի հակաահաբեկչական գործողությունների արդյունքները միջազգային անվտանգության և խաղաղության պահպանման համատեքստում:

4. Համեմատական վերլուծությամբ ներկայացնել ահաբեկչության դեմ պայքարի հայեցակետերը ԱՄՆ-ի ազգային անվտանգության վերջին չորս ռազմավարություններում:
5. Վերլուծել և գնահատել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կողմից ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում իրականացվող գործողությունները:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Ահաբեկչության գլոբալ մարտահրավերները ժամանակակից աշխարհում և առանձին պետությունների դերը դրանց դեմ պայքարի շրջանակներում:
2. «Բուշի դոկտրինան» և միջազգային ահաբեկչության դեմ պայքարի հիմնական ուղղությունները:
3. Հակաահաբեկչական պայքարի միջազգային փորձը՝ այլ երկրների օրինակով:
4. ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Չինաստանի հակաահաբեկչական միջոցառումների իրականացման համեմատական վերլուծությունը:
5. Ահաբեկչության դեմ պայքարը Իսրայելում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենագրություններ

1. **Антонович И., Особенков О., Панкова Л., Щегорцов В.**, Международный опыт профилактики терроризма, М., 2010, 132 с.
2. **Булавин А., Карпович О., Манойло А., Мантусов В.,** Мировая политика. Передовые рубежи и красные линии, М., 2018, с. 167-293.
3. **Возженников А.,** Международный терроризм: борьба за геополитическое господство, М., 2005, 528 с.
4. **Примаков Е.,** Мир после 11 сентября и вторжение в Ирак, М., 2003, 200 с.

5. **Устинов В.,** Международный опыт борьбы с терроризмом, М., 2002, с. 154-234.
6. **Tanner M., Bellacqua J.,** China's Response to Terrorism, CAN, June 2016, p. 208.

Գիտական հոդվածներ

1. **Ազլյան Վ.,** ԱՄՆ գլոբալ ռազմավարության նոր միտումները և համաշխարհային անվտանգության համադրությունը, «21-րդ դար» տեղեկատվական-վերլուծական հանդես, Երևան, 2005, թիվ 3(9), էջ 23-39:
2. **Պետրոսյան Վ.**, Ջորջ Բուշ Կրտսեր. արտաքին քաղաքական մի քանի հղանցքների մասին, «Պատմություն և կրթություն» գիտա-տեսական և մեթոդական հանդես, 2005, թիվ 1-2, էջ 115-124:
3. **Гарусова Л.,** Стратегия борьбы США с международным терроризмом: опыт, новые вызовы, проекция на АТР, Международные проблемы, Россия и АТР, 2016, № 3 (93), с. 119-133.
4. **Егоров К.,** Международный терроризм как глобальная угроза, Власть, 2008, № 6, с. 73-76.
5. **Зонов Ф.,** Международный терроризм и мировой опыт борьбы с ним, Власть, 2011, № 12, с. 103-106.
6. **Кузнецов В.,** Китай подключился к борьбе с терроризмом, Азия и Африка сегодня, 2004, № 12, с. 12−18.
7. **Ледях И.,** Борьба с международным терроризмом и защита прав человека, Труды Института государства и права Российской академии наук, 2013, № 1, с. 137-163.
8. **Морозов В., Литвинова Е.,** Борьба с терроризмом: израильский опыт, Вестник Брянского государственного университета, 2018, № 1, с. 117-123.
9. **Пузырев Д.,** Терроризм в современных международных отношениях КНР, Мировая экономика и международные отношения, 2008, № 8, с. 63-68.

10. **Яшлавский А.,** Ультраправый терроризм на западе в XXI в.: тенденции и особенности, Мировая экономика и международные отношения, 2020, № 64 (12), с. 5-14.
11. **Abrahms M.,** What Terrorists Really Want: Terrorist Motives and Counterterrorism Strategy, International Security, 2008, vol. 32, № 4, p. 78–105.
12. **Andréani G.,** La guerre contre le terrorisme : un succès incertain et coûteux**,** Politique étrangère, 2011, № 2, p. 253-266.
13. **Farag W.,** American security strategy towards terrorism after September 11 attacks, Review of Economics and Political Science, vol. 5, 2020, № 4, p. 323-333.
14. **Jancíková E., Veselovská S.,** The new technologies and the fight against money laundering and the terrorism financing, paper presented in 2nd International Scientific Conference on Economics and Management, 2018, p. 334-341.
15. **Hualing F.,** Responses to terrorism in China, Cambridge University Press, p. 334-356, https://doi.org/10.1017/CBO9781139043793.017, հասանելի է՝ 30.03.2021թ.:
16. **Pannier A., Schmitt O.,** To fight another day: France between the fight against terrorism and future warfare, International Affairs, 2019, vol. 95, № 4, p. 897-916, https://doi.org/10.1093/ia/iiz050, հասանելի է՝ 11.02.2021թ.:
17. **Rapoport D.,** Before the Bombs There Were the Mobs: American Experiences with Terror, Terrorism and Political Violence, 2008, № 20(2), p. 167-194.
18. **Rapoport D.,** The Four Waves of Modern Terrorism, In Attacking Terrorism: Elements of a Grand Strategy, Washington DC, Georgetown University Press, 2004, p. 46-73.
19. **Zhang Ch**., Illegal Religious Activities and Counter-Terrorism in China, Politics and Religion, 2020, № 1, p. 1-25, https://doi.org/-10.1017/S1755048320000309, հասանելի է՝ 11.02.2021թ.:
20. **Zhou Z.,** Rehabilitating Terrorists: The Chinese Approach, Terrorist Trends and Analyses, 2016, № 8 (4), p. 10-15.

Իրավական փաստաթղթեր

1. ԱՄՆ-ի ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարություն (2018թ.)
2. ԱՄՆ-ի ներքին անվտանգության դեպարտամենտի Ահաբեկչության և թիրախավորված բռնության հակազդման ռազմավարություն (2019թ.)
3. ԱՄՆ-ի ազգային անվտանգության ռազմավարություն (2002թ., 2010թ., 2015թ., 2017թ.)
4. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հակաահաբեկչական օրենք:
5. **United States Code**, 2006 Edition, Supplement 4, Title 22 - Foreign Relations and Intercourse, Chapter 38, Section 2656f - Annual country reports on terrorism// https://www.govinfo.gov/content/pkg/USCODE-2010-title22/pdf/USCODE-2010-title22-chap38-sec2656f.pdf, հասանելի է՝ 23.03.2021թ.:

ԹԵՄԱ ՅՈԹԵՐՈՐԴ
ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ահաբեկչության դեմ պայքարը Հայաստանի Հանրապետության համար ունի առանցքային նշանակություն: Աշխարհագրորեն Հայաստանը գտնվում է մերձարևելյան տարածաշրջանի հարևանությամբ, որտեղ միջազգային ահաբեկչական ակտիվությունը դեռևս շարունակվում է բարձր մնալ: Ավելին, Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում Հայաստանն ուղղակիորեն առերեսվեց վարձկան-ահաբեկիչների հետ Արցախի Հանրապետության և իր սահմանների անմիջական հարևանությամբ:

Տնտեսագիտության և խաղաղության ինստիտուտի կողմից 2020թ. հրապարակած ահաբեկչության գլոբալ ինդեքսով 135 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 91-րդ հորիզոնականը, այն ժամանակ, երբ երկրների առաջին եռյակը գլխավորում են Աֆղանստանը, Իրաքը, Նիգերիան: ՀՀ-ն ինքն է եղել ահաբեկչության զոհ, ինչպես նաև բազմիցս դատապարտել է ԻԼԻՊ-ի, Ալ-Նուսրա Ճակատի, Ալ-Քաիդայի և նրանց ճյուղավորումների կողմից իրականացվող գործողությունները:

Ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը պարբերաբար մասնակցում է ՀԱՊԿ-ի և ԱՊՀ-ի Հակաահաբեկչական կենտրոնի համակարգմամբ անցկացվող համատեղ զորավարժություններին:

ՀՀ-ի ազգային անվտանգության ռազմավարությունը ահաբեկչությունը անդրազգային կազմակերպված հանցավորության, զանգվածային ոչնչացման զենքի տարանցման ու տարածման, թմրանյութերի ապօրինի շրջանառության, փողերի լվացման, անօրինական միգրացիայի և մարդկանց առևտրի՝ թրաֆիքինգի հետ մեկտեղ դիտարկում է որպես սպառնալիք: Հայաստանը պայքարում է միջազգային ահաբեկչության և ծայրահեղականության այլ բռնի դրսևորումների դեմ ինչպես միջազգային կառույցների շրջանակներում ստանձնած միջազգային համաձայնագրերի և կոնվենցիաների

պարտավորությունների, այնպես էլ իր կողմից մշակված իրավական բազայի, մասնավորապես «Ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարության», «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քրեական օրենսգրքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, ՀՀ այլ հարակից օրենքների, Կառավարության արձանագրային որոշումների և այլ իրավական փաստաթղթերի շրջանակներում:

Ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարությունն առանձնացնում է ՀՀ-ի համար քիմիական և բակտերիոլոգիական զենքի կիրառմամբ իրականացվող ահաբեկչության վտանգը, տեղեկատվական անվտանգությունը և կիբեռհանցագործությունների դեմ պայքարը: 2012թ. ընդունված ռազմավարությունը՝ պայմանավորված ՀՀ-ի կողմից զբաղեցրած աշխարհագրական դիրքով, չի բացառում հեռանկարում Հայաստանը միջազգային ահաբեկչական կազմակերպությունների կողմից «հանցավոր շահերի գոտի» վերածվելու հավանականությունը, իսկ որպես ահաբեկչության և ծայրահեղական գաղափարախոսության հիմնական թիրախ ռազմավարությունն առանձնացնում է երիտասարդությանը: Հատկանշական է, որ ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարությունն արձանագրում է, որ ՀՀ-ն պատրաստ չէ ահաբեկչությանը դիմակայելուն, ՀՀ-ի բնակչությունը չունի համապատասխան պատրաստվածություն: Արտակարգ իրավիճակները ճիշտ լուսաբանելու բավարար պատրաստվածություն չունեն նաև զանգվածային լրատվության միջոցները:

Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության հակազդեցությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

1) ահաբեկչության կանխարգելում,

2) ահաբեկչության դեմ պայքար,

3) ահաբեկչության դրսևորումների հետևանքների նվազեցում և (կամ) վերացում:

Ահաբեկչության դեմ պայքարում առավել կարևորվում են ահաբեկչության և ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրների բացահայտումը և չեզոքացումը: 2006թ. ՀՀ-ն անդամակցում է Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ (Moneyval) հանձ-

նախմբին, որն իրականացնում է անդամ երկրների փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգերի մշտադիտարկումն ու գնահատումները:

ՀՀ-ի հակաահաբեկչական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

1) գաղափարախոսական, որի նպատակն է ահաբեկչության հակահասարակական և հակամարդկային բնույթի բացահայտումը,

2) իրավական, որի նպատակն է հակաահաբեկչական քաղաքականության իրականացումը գործող օրենսդրության շրջանակներում, ինչպես նաև ահաբեկչության առաջացմանը և բացահայտմանն ուղղված օրենքների ընդունումը,

3) սոցիալ-տնտեսական, որի նպատակն է բնակչության շրջանում ծայրահեղ աղքատության նվազեցումը,

4) ուժային պայքար, որի նպատակն է ահաբեկչական կազմակերպությունների անդամների և ղեկավարների, հանցածին տարրերի հայտնաբերումը և չեզոքացումը,

5) կրոնական, որի նպատակն է, հոգևոր առաջնորդների և կրոնական կազմակերպությունների հետ սերտ համագործակցելով, իրականացնել տեղեկատվական-քարոզչական հակազդեցություն,

6) ազգային, որի նպատակն է պետության ներսում գտնվող ազգային փոքրամասնությունների, ազգային հասարակական տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի պետական քաղաքականության իրականացման առաջնահերթ միջոցառումներն են՝

1) ահաբեկչության դեմ պայքարի իրավիճակի վրա ազդող քաղաքական, սոցիալ-տնտեսական, ներքին և համաշխարհային զարգացումների վերահսկողությունը,

2) համապետական միջոցառումների իրականացման մշակումը և վերահսկողությունը, ահաբեկչական դրսևորումների կանխարգելումը, այդ թվում՝ ահաբեկչական նկրտումների կողմից խոցելի օբյեկտների (ջրամբարներ, քաղաքացիական ավիացիա, երկաթուղային տրանսպորտ, Երևանի մետրոպոլիտեն, Մեծամորի ատոմակայան և այլն) պաշտպանվածության ապահովումը,

3) ահաբեկչության հնարավոր ֆինանսավորման կանխարգելման նպատակով դրամական և այլ գույքային փոխանցումների վերահսկողության հաստատումը,

4) հակաահաբեկչական գործունեության բնագավառում գիտական հետազոտությունների առաջնային ուղղությունների որոշակիացումը և գիտափորձնական մշակումների նախագծումը, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների, մեթոդների ու միջոցների մշակումը և ներդրումը,

5) հանրության կրթման, զբաղվածության և հանրային միջոցառումների միջոցով հանդուրժողականության, սոցիալական համախմբվածության, քաղաքացիական դաստիարակության և հոգևոր արժեքների քարոզումը, ոլորտում ընդգրկված պատասխանատուների օժանդակումը, ծայրահեղականության պատճառները հասկանալու ունակությունների կատարելագործումը,

6) կրոնական և մշակութային բազմազանության վերաբերյալ հասարակության շրջանում տեղեկատվության տարածումը, միջկրոնական երկխոսության խթանումը և տեղեկացվածության ընդլայնումը, տարբեր մշակույթների, կրոնական և էթնիկ խմբերի վերաբերյալ հասարակական կարծիքի և վերաբերմունքի ձևավորման գործում կարևորելով ՁԼՄ-ների դերը՝ ապահովել նրանց ներկայացուցիչների վերապատրաստման կազմակերպումը:

Ռազմավարությունը հավաստում է, որ Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով հակաահաբեկչական կոալիցիայի անդամ և ահաբեկչության դեմ պայքարի հիմնական միջազգային պայմանագրերի մասնակից, պարտավորվել է պայքարել ահաբեկչության և դրա բոլոր դրսևորումների դեմ: Միջազգային հակաահաբեկչական համագործակցության շրջանակներում ՀՀ-ի քայլերն ուղղված են՝

1) ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում պետությունների համագործակցության կանոնակարգմանը վերաբերող միջազգային իրավունքի հիմնարար նորմերի ներդրմանը և ներդաշնակեցմանը, միջազգային կոնվենցիաներին մասնակցությանը,

2) բազմակողմ և երկկողմ փոխգործակցության մեխանիզմների ստեղծմանը,

3) միջազգային ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրների չեզոքացմանն ուղղված գործնական միջոցառումներին մասնակցությանը, զենքի, ռազմամթերքի և պայթուցիկ նյութերի ապօրինի շրջանառության կանխմանը, պետական սահմաններով ահաբեկչական գործունեության սուբյեկտների շարժի խափանմանը, ահաբեկչության քարոզչության և գաղափարախոսության տարածման հակազդմանը:

2005թ. ընդունվեց Ահաբեկչության դեմ պայքարի մասին ՀՀ օրենքը: Օրենքն ուղղված է՝

1) ահաբեկչական գործունեության նախազգուշացմանը, բացահայտմանը, կանխմանը, խափանմանը և դրա հետևանքների նվազեցմանը,
2) ահաբեկչությունից անձի, հասարակության և պետության պաշտպանությանը,
3) ահաբեկչական գործունեությանը նպաստող պատճառների ու պայմանների բացահայտմանը և վերացմանը:

Օրենքն ահաբեկչության դեմ պայքարն անմիջականորեն իրականացնող սուբյեկտներ է սահմանում ՀՀ-ի ազգային անվտանգության ծառայությանը, Ոստիկանությանը և Պաշտպանության նախարարությանը, որոնց գործողությունների համակարգումը վերապահված է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, իսկ հակաահաբեկչական գործողության օպերատիվ շտաբի ընդհանուր ղեկավարումը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետին:

Օրենքը սահմանում է հակաահաբեկչական գործողության իրականացման գոտում հակաահաբեկչական գործողություններ իրականացնող անձանց իրավունքները, ահաբեկչության դեմ պայքար իրականացնող մարմինների հիմնական գործառույթները, հակաահաբեկչական գործողության իրականացման գոտու իրավական ռեժիմը, ահաբեկչության դեմ պայքարին մասնակից անձանց իրավական և սոցիալական պաշտպանության երաշխիքները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

1. Վերլուծել և գնահատել ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետությունը Հայաստանի Հանրապետությունում:
2. Ուսումնասիրել և ներկայացնել ՀՀ-ի հակաահաբեկչական պայքարի նորմատիվ իրավական բազայի վերանայման և փոփոխման անհրաժեշտությունը:
3. Համալիր ուսումնասիրության ենթարկել և գնահատել կիբերահաբեկչության և տեղեկատվական անվտանգության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում:
4. Ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված համալիր միջոցառումների և փոփոխությունների մասին առաջարկություններ:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի հիմնական ուղղությունները:
2. Ահաբեկչության դեմ պայքարի շրջանակում Հայաստանի Հանրապետության որդեգրած քաղաքականության փոփոխման անհրաժեշտության վերլուծությունը տարածաշրջանային արդի մարտահրավերների համատեքստում:
3. Ահաբեկչական վտանգի մեծացումը և արդի քաղաքական զարգացումների վերլուծությունը տարածաշրջանում ստատուս-քվոյի փոփոխման համատեքստում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրավական փաստաթղթեր

1. Ահաբեկչության գլոբալ ինդեքս, Տնտեսագիտության և խաղաղության ինստիտուտ (2020թ.)

2. ՀՀ-ի ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարություն
3. Ահաբեկչության դեմ պայքարի մասին ՀՀ օրենք
4. ՀՀ-ի ազգային անվտանգության ռազմավարություն (2020թ.)
5. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենք
6. ՀՀ քրեական օրենսգիրք
7. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ահաբեկչությունն այսօր իրավամբ հանդիսանում է միջազգային անվտանգության, կայունության և խաղաղության դեմ ուղղված գլոբալ մարտահրավերներից մեկը: Այն սպառնալիք է ոչ միայն առանձին պետությունների կամ տարածաշրջանների, այլ բոլոր երկրների և ողջ մարդկության համար: Ակնհայտ է, որ ժամանակակից աշխարհում առանձին պետություններ և կառույցներ միայնակ ի զորու չեն իրականացնել հակաահաբեկչական արդյունավետ պայքար: Այն, նախևառաջ, պահանջում է միջազգային սերտ համագործակցություն՝ տվյալների փոխանակման, նորմատիվ-իրավական բազայի կատարելագործման, համապատասխան քաղաքականության մշակման, միասնական գործողությունների և վերլուծության իրականացման և մի շարք այլ հարցերի շուրջ: Միաժամանակ, ահաբեկչության դեմ պայքարն առավել լայն և խորքային համատեքստում դիտարկելիս անհրաժեշտ է առաջին հերթին համատեղ և միասնաբար պայքարել ահաբեկչության կանխարգելման ուղղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկելու, ահաբեկչության դրդապատճառ հանդիսացող քաղաքական, տնտեսական, սոցիալական հիմնախնդիրներին համապարփակ լուծումներ տալու շուրջ: Ավելին, արդյունավետ պետական կառավարումը, տնտեսության աճը, նորարար տեխնոլոգիական զարգացումը, հասարակությունների կրթական մակարդակն ու իրազեկվածության բարձրացումը (հատկապես երիտասարդների շրջանում) մեծապես նպաստում են պետությունների կողմից իրականացվող հակաահաբեկչական պայքարին:

Միջազգային ահաբեկչության դեմ պայքարում այսօր իսկ մշակված է լայն իրավաքաղաքական և ինստիտուցիոնալ հենք, ստեղծվել են համագործակցության մի շարք հարթակներ, սակայն հակաահաբեկչական գլոբալ պայքարի արդյունավետության հարցը մի շարք հարցադրումների տեղիք է տալիս՝ ստիպելով դիտարկել ահաբեկչության դեմ մղվող այժմյան պայքարի վերանայման և սաստկացման անհրաժեշտությունը:

Ահաբեկչության դեմ արդյունավետ պայքարը պահանջում է նաև այս ոլորտում բարձրակարգ մասնագետների պատրաստում և նրանց անընդմեջ վերապատրաստում: Ավելին, լինելով դինամիկ զարգացող և անընդմեջ փոփոխվող երևույթ՝ գիտական և ակադեմիական շրջանակների կողմից վերջինիս համապարփակ և շարունակական վերլուծությունն ամուր հիմք կհանդիսանա պետությունների կողմից համապատասխան գիտելիքահեն քաղաքականության մշակման և իրականացման համար:

ԿԱՐԻՆԵ ԳԱԳԻԿԻ ԽՈՋԱՅԱՆ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՁԵՎԵՐԸ

КАРИНЕ ГАГИКОВНА ХОДЖАЯН

СОВРЕМЕННЫЕ МЕТОДЫ БОРЬБЫ С ТЕРРОРИЗМОМ

KARINE G. KHOJAYAN

CONTEMPORARY METHODS OF COMBATING TERRORISM

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Ա. Գույումջյանի

Ստորագրված է տպագրության՝ 11.06.2021:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 5.875:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am